

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ԲԼՅՈՒ ՍԵՆԴ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍԻՓԱՆԻԿԻ ԱԿԽ ԵՐԵՎԱԿՄԱՆ
«ԲԼՅՈՒ» ՏԵՂԱՄԱՍՈՒՄ 2025-2027ԹԹ. ԿԱՏԱՐՎԵԼԻՔ
ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Տնօրեն՝

Ժ. ՄԵԼՈՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ	3
1. ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՆՔԸ	7
2. ՆԱԽԱԶԵՌՆՈՂԻ ԱՆՈՒՆԸ (ԱՆՎԱՆՈՒՄԸ) ԵՎ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ (ԳՏՆՎԵԼՈՒ) ՎԱՅՐԸ	12
3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	14
4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	14
4.1. Նախատեսվող գործունեության վայրը	14
4.2. Նախատեսվող գործունեության բնութագիրը	20
4.3. Երկրաձևաբանություն, լանջերի թեքություն	31
4.4. Մեյամիկ կառուցվածք, արտածին երկրաբանական երևույթներ	33
4.5. Կլիմայական պայմաններ	33
4.6. Մթնոլորտային օդ	40
4.7. Ջրային ռեսուրսներ	40
4.8. Հողային ծածկույթ	42
4.9. Կենսաբազմազանություն	45
4.10. Անտառային ռեսուրսներ	48
4.11. Բնության հատուկ պահպանվող տարածքներ	49
4.12. Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ	50
4.13. Ազդակիր համայնքը	50
5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ	54
6. ՄԱՐԴՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԳՈՐԾՈՆՆԵՐԸ, ՌԻՍԿԵՐԸ	63
7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ	65
8. ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻՆ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ	71
9. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ	73
10. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ	76
11. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ	78
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	80
Հավելված 1. Քաղվածք պետական միասնական գրանցամատյանից	81
Հավելված 2. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պերական գրանցման վկայականի պատճեն	83

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Օգտակար հանածոյի պաշարներ՝ օգտակար հանածոյի կուտակումներ, որոնց ծավալը, քանակը, որակը և տարածքային դիրքն ու ձևը որոշված են.

Երկրաբանական ուսումնասիրություններ՝ ընդերքի երկրաբանական աշխատանքների համալիր, որի նպատակն է ուսումնասիրել երկրակեղևի կառուցվածքը, ապարների առաջացման պայմանները, արտածին երկրաբանական պրոցեսները, հրաբխային գործունեությունը, ինչպես նաև հայտնաբերել ու գնահատել կամ վերագնահատել օգտակար հանածոների պաշարները.

Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն՝ թույլտվություն, որն իրավունք է տալիս ընդերքի որոշակի տեղամասում իրականացնելու երկրաբանական ուսումնասիրություններ օգտակար հանածոների հայտնաբերման, հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի պաշարների վերագնահատման համար.

Նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում.

Նախագծային փաստաթուղթ՝ նախատեսվող գործունեության իրականացման համար օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված փաստաթուղթ կամ փաստաթղթերի փաթեթ և դրանց փոփոխություն: Նախատեսվող գործունեության իրականացման համար օրենքով կամ այլ իրավական ակտերով փաստաթուղթ կամ փաստաթղթերի փաթեթ նախատեսված չլինելու դեպքում՝ նախատեսվող գործունեության փուլային նկարագիր, ընդերքօգտագործման դեպքում՝ Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 36-րդ և 39-րդ հոդվածներով սահմանված ծրագիր կամ 50-րդ հոդվածով սահմանված արդյունահանման նախագիծ.

Շրջակա միջավայր՝ բնական և մարդածին բաղադրիչների (մթնոլորտային օդ, կլիմա, ջրեր, հողեր, ընդերք, լանդշաֆտ, կենդանական ու բուսական աշխարհ, ներառյալ անտառ, բնության հատուկ պահպանվող տարածքներ կամ բնապահպանական հողեր, բնակավայրերի կանաչ գոտիներ, կառույցներ, բնական օբյեկտներ, պատմության և

մշակույթի հուշարձաններ), սոցիալական միջավայրի, ներառյալ մարդու առողջության, անվտանգության.

Շրջակա միջավայրի վրա ազդեցություն՝ հիմնադրույթային փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի կամ դրա բաղադրիչներից որևէ մեկի փոփոխությունը.

Նախատեսվող գործունեություն՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի ույն օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում նշված գործունեության տեսակներ, 6-րդ և 7-րդ մասերով սահմանված գործունեություն, իսկ սույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված կարգով նախատեսված դեպքերում՝ նաև դրանց վերակառուցում կամ ընդլայնում կամ տեխնիկական կամ տեխնոլոգիական վերազինում կամ վերապրոֆիլավորում կամ կոնսերվացում կամ տեղափոխում կամ դադարեցում կամ փակում, ատոմային էներգիայի անվտանգության տեսակետից կարևոր օբյեկտների դեպքում՝ շահագործումից հանում (ատոմային էներգիայի անվտանգության տեսակետից կարևոր օբյեկտ հանդիսացող գերեզմանոցի դեպքում՝ փակում) կամ քանդում կամ նախագծային փոփոխություն.

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում՝ նախաձեռնողի կողմից նախատեսվող գործունեության հետևանքով շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ուսումնասիրության գործընթաց.

Նախաձեռնող՝ հիմնադրույթային փաստաթղթի նախագիծ ներկայացնող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին կամ նախատեսվող գործունեություն իրականացնելու համար դիմող անձ.

Ազդակիր բնակավայր՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրույթային փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հնարավոր ազդեցության ենթակա բնակավայր (Երևան քաղաքի դեպքում՝ վարչական շրջան).

Ազդակիր համայնք՝ ազդակիր բնակավայր ներառող համայնք.

Շահագրգիռ անձ կամ հանրություն՝ հիմնադրույթային գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով անմիջական կամ հավանական ազդեցություն կրող կամ դրանց վերաբերյալ ընդունվող որոշումների

նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերող մեկ կամ մեկից ավելի ֆիզիկական կամ իրավաբանական անձ.

Բնապահպանական կառավարման պլան` շրջակա միջավայրի վրա հնարավոր դրական ազդեցությունների պահպանման և ուժեղացման, բացասական ազդեցությունների կանխարգելման, բացառման, նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման և շրջակա միջավայրին հասցվող վնասի հատուցման համար նախատեսվող միջոցառումները (շինարարության, շահագործման, փակման, հետփակման փուլերը, ռիսկային և արտակարգ իրավիճակները), դրանց ընտրության և արդյունավետության հիմնավորումը, իրականացման ժամանակացույցը, մշտադիտարկման ցուցիչները, ծախսերի գումարային գնահատումը նախատեսող փաստաթուղթ.

Շրջակա միջավայրի վրա ազդեցության մշտադիտարկման (մոնիտորինգի) ծրագիր` հիմնադրույթային փաստաթղթի դրույթների գործողության կամ նախատեսվող գործունեության` նախագծային փաստաթղթին համապատասխան իրականացման ընթացքում և դրանից հետո շրջակա միջավայրի վրա ներգործության դիտարկմանը, հետնախագծային վերլուծությանը, պետական փորձաքննական եզրակացության և Հայաստանի Հանրապետության օրենքներով կամ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների կատարմանը կամ արտադրական հսկմանը (ինքնահսկմանը) ուղղված գործողությունների ամբողջություն.

Բույսերի կարմիր գիրք` միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող բույսերի և համակեցությունների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին.

Կենդանիների Կարմիր գիրք` միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ է, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացող կենդանական տեսակների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների, ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին: Կենդանիների Կարմիր գիրքը վարվում է հազվագյուտ և անհետացող կենդանական տեսակների և համակեցությունների հաշվառման,

պահպանության, վերարտադրության, օգտագործման և գիտականորեն հիմնավորված հատուկ միջոցառումների մշակման և իրագործման, ինչպես նաև դրանց մասին բնակչությանը իրազեկելու նպատակով.

Հող՝ երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ.

Հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով.

Ռեկուլտիվացում՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական.

Խախտված հողեր՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր.

1. ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՆՔԸ

Միփանիկի ԱԿԽ երևակման Բյուտ տեղամասի տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության հաշվետվությունը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են հետևյալ իրավական ակտերում.

– ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (ՀՕ-280, 28.11.2011թ.), որով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

– ՀՀ Հողային օրենսգիրք (ՀՕ-185, 02.05.2001թ.), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

– ՀՀ Ջրային օրենսգիրք (ՀՕ-373, 04.06.2002թ.), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

– «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.), որը սահմանում է պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

– «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.), որը սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:

– «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք ՀՕ-522-Ն (ընդ. 1994թ. և լրամշակված՝ 2022թ.), որով կարգավորվում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը, մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

– «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

– «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է ՀՕ-110, 21.06.2014թ., խմբագրվել է 03.05.23 ՀՕ-150-Ն), կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում ռազմավարական էկոլոգիական գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, անդրսահմանային ազդեցության գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության, հանրության ծանուցման, հանրային լսումների իրականացման, պետական փորձաքննական եզրակացության տրամադրման, ուժը կորցնելու, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, փորձաքննության և նախատեսվող գործունեության իրականացման գործընթացներում նախաձեռնողների իրավունքների ու պարտականությունների հետ կապված հարաբերությունները:

– «Թափոնների մասին» 24.11.2004թ.-ի թիվ ՀՕ-159-Ն օրենք, որը կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը:

- ՀՀ կառավարության 19.11.2014թ.-ի թիվ 1325-Ն որոշում, որով սահմանվել է հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը:
- ՀՀ կառավարության 14.12.2017թ.-ի թիվ 1643-Ն որոշում, որը կիրառվում է Հայաստանի Հանրապետության տարածքում խախտված հողերի հաշվառման, հողաշինարարական, քարտեզագրման, կանխատեսվող ու իրականացման ենթակա ռեկուլտիվացման աշխատանքների նախագծման, ռեկուլտիվացման, ռեկուլտիվացված հողերի նպատակային նշանակության ուղղությունների որոշման, ինչպես նաև նպատակային ու գործառական նշանակությանը համապատասխան՝ դրանց հետագա օգտագործման ժամանակ:
- ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի N781-Ն որոշում, որը սահմանում է սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:
- ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշում, որը սահմանում է ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը:
- ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի N1404-Ն որոշում, որով սահմանվել են հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և պակաս արդյունավետ հողերի բարելավման համար հողի բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները:
- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը,
- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը,
- ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը:

- ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N676-Ն որոշում, որով հաստատվել են ընդերքօգտագործման թափոնների կառավարման և վերամշակման պլանների օրինակելի ձևերը:
- ՀՀ կառավարության 18.08.2021թ.-ի N1352-Ն որոշում, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ընդերքօգտագործողների կողմից Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածով սահմանված ռեկուլտիվացիոն աշխատանքների՝ նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգի հետ կապված իրավահարաբերությունները:
- ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի N°1396-Ն որոշում, որով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում հողի բերրի շերտի նպատակային և արդյունավետ օգտագործման հետ կապված հարաբերությունները;
- ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի N1733-Ն որոշում, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված՝ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման հետ կապված հարաբերությունները:
- ՀՀ առողջապահության նախարարի 06.03.2002թ.-ի N138 հրաման, որով հաստատվում են աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում աղմուկի սանիտարական նորմերը:
- ՀՀ կառավարության 20.01.2005թ.-ի N64-Ն որոշում, որով հաստատվել են ջրակնոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչները:
- ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 25.10.2022թ. N 369-Ն հրաման, որով հաստատվել են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման դրույթների կիրարկման ուղեցույցները:
- ՀՀ կառավարության 11.11.2021թ.-ի N 1848-Ն որոշում, որով հաստատել ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողերի, ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման, այդ թվում՝ կենսաբանական վերականգնման ուղեցույցը:

- ՀՀ կառավարության 27.05.2015թ.-ի N764-Ն որոշումը, որով հաստատվել է շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը:
- ՀՀ կառավարության 25.09.2014թ.-ի N 1059-Ա որոշում, որով հաստատվել են ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը (համաձայն N 1 հավելվածի) և Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության և օգտագործման բնագավառի 2014-2020 թվականների պետական ծրագրի միջոցառումները` (համաձայն N 2 հավելվածի):

**2. ՆԱԽԱԶԵՌՆՈՂԻ ԱՆՈՒՆԸ (ԱՆՎԱՆՈՒՄԸ) ԵՎ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ
(ԳՏՆՎԵԼՈՒ) ՎԱՅՐԸ**

Գործունեության նախաձեռնողը «Բյու» ՍՊ ընկերությունն է: Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում ընկերության գրանցման համարն է 278.110.1358398, գրանցման ամսաթիվը՝ 2023-12-13, գտնվելու վայրը՝ Հայաստան, ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ԽՈՐԵՆԱՅՈՒ Փ., 221/36 տ. (հավելված 1):

3. ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ

«Բյու Սենդ» ՍՊ ընկերությունը նախատեսում է իրականացնել ՀՀ Արարատի մարզի Սիփանիկի ԱԿԽ երևակման Բյու տեղամասի եկրաբանական ուսումնասիրություն, ինչը համապատասխանում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2)-րդ կետի ա. ենթակետին՝ երկրաբանական ուսումնասիրություններ:


4. ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

4.1. Նախատեսվող գործունեության վայրը

Սիփանիկի ավազակոպճային խառնուրդի երևակման Բյու տեղամասը վարչական տեսակետից գտնվում է ՀՀ Արարատի մարզի Մասիսի տարածաշրջանում և ներառված են ՀՀ Արարատի մարզի Մասիս խոշորոցված համայնքի Սիփանիկ բնակավայրի սահմաններում: Երևակումը գտնվում է ազդակիր Սիփանիկ գյուղից 3.77կմ հեռավորության վրա: Հովտաշատ գյուղի մոտակա բնակելի տարածքները գտնվում են երևակման հայցվող սահմանից 0.89կմ, Զորակ բնակավայրի շինությունները՝ 1.8կմ, Դարբնիկ բնակավայրի շինությունները՝ 2.9կմ, Սայաթ-Նովա գյուղի բնակելի տարածքները և արտադրական-արդյունաբերական շինությունները՝ 0.96կմ, Մասիս քաղաքի արդյունաբերական գոտին՝ 1.1կմ, Սիս գյուղի բնակելի շինությունները՝ 110մ հեռավորությունների վրա: Մոտ 100մ հեռավորության վրա է գտնվում Սիս բնակավայրի գերեզմանատունը (նկար 1-3):

S-2-9 տեղական նշանակության ավտոճանապարհը անցնում է տեղամասի արևմտյան սահմանից 54-415մ հեռավորության վրա, 95մ հեռավորության վրա, դեպի հարավ անցնում է ՀԿԵ Երևան-Արարատ ուղղության երկաթգիծը, Մասիս կայարանը գտնվում է մոտ 2.3կմ հեռավորության վրա:

Հայցվող տեղամասը արևմուտքից սահմանակից է գործող ձկնաբուծարանին:



Նկար 1.



Նկար 2.

Տեղամասի կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են. հյուսիսային լայնությունը՝ 40° 04' 1.27" և արևելյան երկայնությունը՝ 44° 22' 47.8: Հայցվող տարածքի կոորդինատները ըստ WGS-84 (ArmRef-02) համակարգի ներկայացված են ստորև, աղյուսակ 1-ում:


Աղյուսակ 1.

Կետի համարը	Կետի կոորդինատները ըստ Arm WGS-84 համակարգի	
	X	Y
1.	4437803.6402	8446416.3428
2.	4437565.8617	8447053.2263
3.	4437341.9946	8447057.2823
4.	4437204.2313	8447094.1192
5.	4437202.8917	8447342.3306
6.	4436945.4419	8447337.6368

Կետի համարը	Կետի կոորդինատները ըստ Arm WGS-84 համակարգի	
	X	Y
7.	4436974.6777	8447075.0124
8.	4436970.9628	8446751.9027
9.	4437119.7833	8446733.2039
10.	4437333.0274	8446685.1982
11.	4437359.9273	8446214.8191
1.	4437803.6402	8446416.3428

Ի Ր Ա Վ Ի Ճ Ա Կ Ա Յ Ի Ն Հ Ա Տ Ա Կ Ա Գ Ի Տ
(հատված K-38-137-Դ թերթից)

Կոորդինատային համակարգը՝ WGS-84 (ARMREF 02)



Հացվող տարածքի կոորդինատները ըստ Arm WGS-84 համակարգի

Կետի համարը	Կետի կոորդինատները ըստ Arm WGS-84 համակարգի		Կետի համարը	Կետի կոորդինատները ըստ Arm WGS-84 համակարգի	
	X	Y		X	Y
1.	4437803.6402	8446416.3428	7.	4436974.6777	8447075.0124
2.	4437565.8617	8447053.2263	8.	4436970.9628	8446751.9027
3.	4437341.9946	8447057.2823	9.	4437119.7833	8446733.2039
4.	4437204.2313	8447094.1192	10.	4437333.0274	8446685.1982
5.	4437202.8917	8447342.3306	11.	4437359.9273	8446214.8191
6.	4436945.4419	8447357.6368	1.	4437803.6402	8446416.3428

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Կ Ա Ն Ն Շ Ա Ն Ն Ե Ր

Երկրաբանահետախուզական աշխատանքների տարածք



Կատարող



Որակավորման վկայականի համար՝ 0465 (համար)

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՎԵՏԻՍՅԱԼ

(Անուն, ազգանուն)

24.02.2023թ.

տրված

28.03.2025թ.

(Ամիս, ամսաթիվ)

Նկար 4.


Բյու տեղամասից 57-ից 627մ հեռավորության վրա հոսում է Հրազդան գետը: Փաստացի առկա հեռավորությունը բավարարում է ՀՀ կառավարության 08.12.2022թ.-ի №1909-Ն որոշման հավելվածի 21-րդ աղյուսակով նախատեսված պահանջներին (ջրապահական գոտու առավելագույն չափը սահմանվել է 32մ):

Հայցվող տեղամասի շրջանում են գտնվում Արարատյան ոռոգման-դրենաժային համակարգի մաս կազմող 2-րդ և 3-րդ կարգի ջրանցքներ: Ջրանցքը գտնվում է հայցվող տեղամասից 9.1մ-ից 403մ հեռավորությունների վրա: Փաստացի առկա հեռավորությունը բավարարում է ՀՀ կառավարության 08.12.2022թ.-ի №1909-Ն որոշման հավելվածի 24-րդ աղյուսակով միջտնտեսային ջրանցքների համար նախատեսված 9մ երկարությամբ անօտարելի գոտիների վերաբերյալ պահանջին:

Միաժամանակ, համաձայն ՀՀ շրջակա միջավայրի նախարարության ջրային պետական կադաստրի Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքի GIS ատլասի տվյալների՝ երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքում, դրան հարակից շրջանում գտնվող ջրանցքների համար անօտարելի գոտիների սահմանում առհասարակ նախատեսված չէ:

Հրազդան գետի և ոռոգման-դրենաժային համակարգի ենակառուցվածքների տեղադիրքը և հեռավորությունները ներկայացված են նկար 5-1-ում:

Ձկնաբուծական տնտեսությունը գտնվում է հայցվող տարածքից 134-219մ հեռավորությունների վրա (նկար 5-2): ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի փետրվարի 1-ի N 06-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 31-04.01-2024 «Արտադրական և հասարակական նշանակության շենքերի ու շինությունների սանիտարապաշտպանական գոտիներ և սանիտարական դասակարգում» ՀՀ շինարարական նորմերով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների համար սանիտարական-պաշտպանիչ գոտու սահմանում նախատեսված չէ:



Կատարող _____ Խաչատուր Ավետիսյան _____ 15.07.2025թ.
 (Անիս, ստորագրիվ)

Որակավորման վկայականի համար 0465 (Համարը) _____ 24.02.2023թ.
 տրված _____

Նկար 5-1. Հրազդան գետի և ոռոգման-դրենաժային համակարգի ենակառուցվածքների տեղադիրքը և հեռավորությունները հայցվող տարածքից

4.2. Նախատեսվող գործունեության բնութագիր

Երկրաբանական կառուցվածքը

Միփանիկի ԱԿԽ երևակման տարածքը կառուցվածքային տեսակետից հարում է Միջին Արաքսյան տեկտոնական իջվածքին :

Շրջանի երկրաբանական կառուցվածքի վերաբերյալ տեղեկությունները և հիմնական տարրերը ներկայացված են ըստ K-38-137-B,Г տոպոգրաֆիական թերթի սահմաններում Վ. Ամարյանի, Է. Խարազյանի կողմից կազմված պետական 1:50000 մասշտաբի երկրաբանահանութային աշխատանքների հաշվետվության և քարտեզագրական նյութերի տվյալների:

Երկրաբանական կտրվածքում մերկանում են հետևյալ ապարները (վարից-վեր).

1) վերին էոցեն, Զովաշենի շերտախմբի ($\text{Քg}_{2}^{3}zv$) կազմում մասնակցում են հիմնականում ավազաքարեր, կավային ավազաքարեր, կավեր, կրաքարեր, տուֆանստվածքային և հրաբխածին առաջացումներ: Շերտախմբի առավել հզոր կտրվածքը մերկանում է Ագատ գետի ավազանում, Զովաշեն գյուղի մոտ: Նկարագրվող շրջանում վերին էոցենի առաջացումները հատվել են Մխչյան, Թազագյուղ, Փարաքար բնակավայրերի շրջակայքում, Հոկտեմբերյանի իջվածքի շրջանում հորատված կառուցվածքային հորատանցքերում՝ 765-1028մ խորություններում և ներկայացված են գերազանցապես մանր-միջին հատիկային կանաչավուն-մոխրագույն և շագանակագույն-գորշ ավազաքարերով, ալևրոլիտների և մանրահատիկ ավազաքարերի ենթաշերտերով: Թազագյուղ-Փարաքար հատվածում Զովաշենի շերտախմբի առաջացումները ծածկում են միջին պրոտերոզոյի-ստորին պալեոզոյի մետաորֆային թերթաքարերի հողմահարված մակերևույթը, այլ հատվածներում տեղադրված են միջին էոցենի առաջացումների վրա, հիմքում առանձնացվում է բազալային կոնգլոմերատների շերտ:

2) Վերին-միջին օլիգոցեն, Շոռաղբյուրի շերտախումբ ($\text{Քg}_{3}^{1-2}sh$): Ներկայացված է հիմնականում մոխրագույն և մուգ-մոխրագույն կավային ալևրոլիտներով, կավերով, բաց-մոխրագույն և կանաչավուն-մոխրագույն ավազաքարերի և տուֆաավազաքարերի շերտերով: Կավերը, ալևրոլիտները և ավազաքարերը սովորաբար ունեն նուրբ-շերտավոր կառուցվածք և ձևավորում են 5-10մ հզորությամբ հերթագայվող միկրոոռիթմեր: Ապարների բեկորային զանգվածը վատ տեսակավորված է, 0.1-0.01մ չափերի:

3) Ստորին միոցենի հացավանի շերտախմբին են ($N_1^1 ac$) վերագրվում խայտաբղետ կավերի (առավելապես՝ կարմրագույն և հաճախ՝ գիպսաբեր) միկրոկոնգլոմերատների, նուսուլիտային ավազաքարերի, կոնգլոմերատների, այրվող թերթաքարերի հերթափոխվող շերտախմբը: Այս ապարների ընդհանուր հզորությունը մոտ 750մ է:

4) Միջին միոցենի Ջրվեժի շերտախումբը ($N_1^2 dz$) ներկայացված է գիպսա-աղաբեր կավերով՝ քարաղի, գիպսի և անհիդրիդի դարսաշերտերով, որի ընդհանուր հզորությունը 1285մ է:

5) Վերին միոցենի Հրագդանի շերտախումբը ($N_1^3 rz$) ներկայացված է կավերի, ավազաքարերի ու կոնգլոմերատների հերթափոխվող շերտերով: Այս ապարների ընդհանուր հզորությունը մոտ մոտ 150մ է:

6) Վերին պլիոցենի Արագածի շերտախումբը ($N_2^3 ar$): Շերտախմբի առաջացումները ներկայացված են անդեզիտաբազալտային, բազալտային, անդեզիտային և անդեզիտադացիտային լավային ծածկոցներով, որոնք գրավում են ընդարձակ տարածքություններ Արագածի հարավային և արևմտյան նախալեռներում: Լայն տարածում ունեն նաև Հոկտեմբերյանի իջվածքի սահմաններում, որտեղ համատարած ծածկոցանման մարմիններ: Արատավիժման կենտրոնները ներկայացված են հզոր խարամային-լավային կոներով: Լավային ծածկոցների հզորությունը տատանվում է 60-40-ից 150-200մ սահմաններում:

7) Վերին պլիոցեն-ստորին չորրորդականի ($N_2^3 - Q_1$) Սովետաշենի հաստվածքի գլաքարային առաջացումները Սովետաշեն բնակավայրի շրջակայքում առաջացնում են լայն, հարթ և մեղմաթեք սարահարթ՝ մոտ 10-12կմ² մակերեսով: Հաստվածքի հզորությունը տատանվում է 2-3-ից 20-30մ սահմաններում, գլաքարերը ծածկոցի տեսքով տեղադրված են Հացավանի շերտախմբի խայտաբղետ առաջացումների հողմահարված մակերեսին: Գերակշռում են 5-10 մինչև 15սմ տրամագծով գլաքարերը, առանձին հատվածներում հանդիպում են մեծաբեկորներ մինչև 1մ տրամագծով: Գլաքարերն ու մեծաբեկորները լավ հղկված են, ներկայացված են անդեզիտներով, անդեզիտադացիտներով, անդեզիտաբազալտներով: Ավելի հազվադեպ հանդիպում են միոցենի, պալեոգենի և ավելի հին ապարների գլաքարեր: Առանձին վայրերում

բեկորային նյութը ցեմենտացված է կրային տուֆերով, որոնք հաճախ հանդես են գալիս փոքր հզորության ոսպնյակաձև շերտերի տեսքով :

8) Արարատյան հարթավայրի սահմաններում լայն տարածում ունեն միջին-վերին չորրորդականի երրորդ (Q_{III-II}) և երկրորդ դարավանդների (ia^2Q_{II}) լճա-այուվիալ, այուվիալ-պրոյուվիալ նստվածքների հորիզոնները և Արաքսի ու Սևջուր գետերի հնահունային առաջացումները, որոնց հզորությունը հասնում է մինչև 100-120մ-ի : Դրանք ներկայացված են հիմնականում ավազակոպճային կուտակումներով, ավազներով, ավազային ու դիատոմիտային կավերով :

Վերին չորրորդականին են վերագրվում նաև Արաքս գետի առաջին դարավանդի (iQ_{III}) 0.5մ-ից մինչև 7մ հզորությամբ լճա-ճահճային առաջացումները, որոնք դիտարկվում են մեկուսի կղզյակների տեսքով, ինչպես նաև շինարարական ավազները՝ 5-15մ հզորությամբ :

9) Վերին չորրորդական-ժամանակակից դարաշրջանը (Q_{III-IV}) ներկայացված է ճահճային, ավազաքարակավային առաջացումներով, որոնք տարածված են հիմնականում Արարատյան դաշտի կենտրոնական հատվածներում :

10) Ժամանակակից այուվիալ-դեյուվիալ նստվածքները ձևավորվել են Արաքս գետի, դրա վտակների հիդրոլոգիական-երոզիոն գործունեության արդյունքում, առաջացնում են ընդարձակ (մինչև 2.5կմ) հունային դարավանդներ (0.5-3.5մ) : Ներկայացված են ավազակավային, կավային, տիղմային կազմի նստվածքային շերտերից, առանձին հատվածներում դիտվում են մեծաբեկորային (մինչև 1մ) նյութով կազմված շերտեր : Առաջացումների հզորությունը տատանվում է լայն միջակայքում՝ 1-2-ից 10-15մ :

Ինտրուզիվ ապարներ Սիփանիկի ԱԿԽ երևակման շրջանում չկան : Գաբբրո-նորիտային կազմի ապարների ինտրուզիվ համալիր հատվել է 1984-88թթ.ին անցած հորատանցքերով Արարատյան դաշտի արևմտյան հատվածում՝ Հոկտեմբերյանի շրջանում, 3651-5000մ խորություններում :

Տեկտոնիկա. ինչպես արդեն նշվել է, հայցվող երևակման տարածքը կառուցվածքային տեսակետից հարում է Միջին Արաքսյան տեկտոնական իջվածքին, ինչը՝ հանդիսանալով խոշոր միջլեռնային տեկտոնական ճկվածք, ձգվում է Ջուլֆայի անտիկլինալային բարձրացումից հարավ-արևելքում մինչև Ախուրյան գետի ակունքը

հյուսիս-արևմուտքում : Իջվածքի ձևավորումը սկսվել է Էոցենի վերջից (երբ փոփոխվել է ողջ Անտիկովկասի երկրատեկտոնական զարգացման ընդհանուր պլանը) և ավարտվել ուշ չորրորդական ժամանակաշրջանում :

Հետագայում՝ լ.Արտենի-գ.Փարաքար-Մարմարաշեն, Բեդի-Մադարակ, Նորաշեն-Իլկասար, լ.Արարատ-Հայկական լեռնաշղթա գծերով առաջացած վարնետքային խախտումների արդյունքում սինկլինալային իջվածքը վերածվել է գրաբեն-սինկլինորիումի :

Նախնական դիտարկման արդյունքներով և ֆոնդային նյութերի ուսումնասիրության տվյալներով, Սիփանիկի ԱԿԽ երևակման Բլյու տեղամասի տարածքը ծագումնաբանորեն կապված է Արարատյան հարթավայրի ստորին (առաջին) լճային դարավանդի ավազների, խճաքարերի, ավազակոպճային առաջացումների, ավազակավերի-կավավազների հաստվածքի հետ: Հաստվածքի հզորությունը տատանվում է 40-70մ-ի սահմաններում, հզորության տատանումները կապված են պալեոռելիեֆի մակերևույթի հետ:

Բուն հայցվող երևակման տարածքում մակերևույթի բացարձակ բարձրությունները տատանվում են 827.7-828.9մ սահմաններում, հետախուզման ստորին սահման է ընդունվել 805մ հորիզոնը:

Մակերևույթից օգտակար հաստվածքը վրածածկված է ժամանակակից բերվածքային առաջացումներով՝ աղուտ-ալկալի կավային հողերով, կավավազային զանգվածով: Ժամակակից առաջացումների ընդհանուր հզորությունն կազմում է մինչև 2.5մ, որից աղուտ-ալկալի հողերը՝ 0.35մ:

Ըստ էության, օգտակար հանածոյի մարմինը հետախուզվող տեղամասում ներկայացված է հորիզոնական կամ հորիզոնականին մոտ տեղադրված շերտաձև մարմնի տեսքով:

Ավազակոպճային կուտակում ավազային և կոպճային ֆրակցիաները բաշխված են անկանոն:

Հարակից հանքավայրերի (Սևջրի, Մեդիսի հանքավայրեր) ավազը միջին-խոշոր հատիկային են, տարակազմ-հատիկային է, հատիկներն ըստ ձևի անկյունավոր են, որոնց մակերևույթը թույլ հղկված է: Ավազների կազմը պոլիմիկտային է, ներկայացված է

հրաբխային ապարների, դաշտային սպատի, քվարցի, կարբոնատային ապարների կտորներով:

Խճաքարային բաղադրիչը ներկայացված է ամուր հրաբխային, ավելի հազվադեպ՝ նստվածքային և մետամորֆային ապարների կլորավուն, հղկված կտորներով: Գերակշռում է 10-40մմ ֆրակցիայի խճազլաքարային զանգվածը:

Համաձայն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի օգոստոսի 11-ի N06-Ն հրամանի հավելված 3-ի հրահանգի աղյուսակ 1-ի՝ երևակմամբ պատկանում է 2-1 խմբին՝ 2.1. բոլոր ծագումնաբանական տիպերի խոշոր և միջին շերտային ու շերտաձև հանքավայրեր՝ օգտակար ստվարաշերտի ոչ կայուն կառուցվածքով (ոչ կոնդիցիոն ապարների նրբաշերտերով) և հզորությամբ կամ ավազի ու կոպճի փոփոխական որակով (տարբեր տեսակներն ու մակնիշները տարածականորեն չեն երկրաչափացվում):

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների մեթոդաբանությունը

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող երևակման տարածքում կատարվելիք երկրաբանահետախուզական աշխատանքների ծրագիրը կազմված է ըստ «Инструкция по составлению проектов и смет на геологоразведочные работы» և «Ավազի և ավազակոպճային խառնուրդի հանքավայրերի պաշարների դասակարգման կիրառման» հրահանգների հանձնարարականների:

Երկրաբանահետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել երկրաբանահանույթային, մակերևութային հետախուզական փորվածքների անցման, փաստագրման և նմուշարկման աշխատանքների համալիրով:

Համաձայն «Ավազի և ավազակոպճային խառնուրդի հանքավայրերի պաշարների դասակարգման կիրառման հրահանգ»-ի՝ ըստ երկրաբանական կառուցվածքի բարդության, հայցվող տեղամասի ավազակոպճային խառնուրդի կուտակը համապատասխանում է 2-1 խմբին:

Այս խմբի հանքավայրերի համար նախատեսված է պաշարների դասակարգման համար նախատեսված են հետախուզական ցանցի խտության հետևյալ բնութագրերը:

Հանքավայրի խումբը	Հանքավայրի տիպը	Փորվածքների միջև հեռավորությունն ըստ պաշարների կարգերի, մ		
		A	B	C ₁
2-րդ	2.1. Բոլոր ծագումնաբանական տիպերի խոշոր և միջին շերտային ու շերտաձև հանքավայրեր՝ օգտակար ստվարաշերտի ոչ կայուն կառուցվածքով (ոչ կոնդիցիոն ապարների նրբաշերտերով) և հզորությամբ կամ ավազի ու կոպճի փոփոխական որակով (տարբեր տեսակներն ու մակնիշները տարածականորեն չեն երկրաչափացվում)	-	100-200	200-300

Հետախուզման ստորին սահման է ընդունվել 805մ հորիզոնը:

Հաշվի առնելով օգտակար հանածոյի մարմնի մորֆոլոգիական ձևը և չափսերը, ուսումնասիրության ենթակա հաստվածքի հզորությունը, հետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել մինչև 25մ խորությամբ թվով 28 հորատանցքերի միջոցով:

Հորատանցքերի միջև հեռավորությունը տատանվում է 119-ից 264մ սահմաններում: Ընտրված հետախուզացանցը թույլ կտա օգտակար հանածոյի հետախուզված պաշարները հաշվարկել արդյունաբերական B և C₁ կարգերով:

Օգտակար հանածոյի որակական հատկությունները պետք է ուսումնասիրվեն ըստ «Ավազ շինարարական աշխատանքների համար. Տեխնիկական պայմաններ» ԳՈՍՏ 8736-2014 և «Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար» 8267-95 ՀՍՏ ԳՈՍՏ տեխնիկական պահանջների:

Նախապատրաստական շրջան, ծրագրի կազմում, կազմակերպում և լուծարում

Մինչև նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմելը, անհրաժեշտ է ծանոթանալ ֆոնդային և հրատարակված նյութերին, ինչպես նաև գործող հրահանգներին և ԳՈՍՏ-երին:

Կատարողների աշխատանքի ծախսը կազմում է.

I կարգի երկրաբան - 1 մարդ - 0.5 ամիս

տեխնիկ-երկրաբան - 1 մարդ - 0.5 ամիս:

Ընդամենը՝ - 2 մարդ - 1 ամիս:

Նախագծի կազմում.

I կարգի երկրաբան - 1 մարդ - 0.5 ամիս

տեխնիկ-երկրաբան - 1 մարդ - 0.5 ամիս:

Ընդամենը` - 2 մարդ - 1 ամիս:

Կազմակերպում և լուծարում

Հանաձայն “Инструкция по составлению проектов и смет на геологоразведочные работы” հրահանգի պահանջների, աշխատանքների կազմակերպման ծախսերը կազմում են դաշտային աշխատանքների նախահաշվային արժեքի 1%-ը: Դաշտային աշխատանքների ավարտից հետո նախատեսվում են լուծարման աշխատանքներ, որոնց ծախսերը կազմում են դաշտային աշխատանքների արժեքի 0.8%-ը:

Երկրաբանահանութային աշխատանքներ

Երևակման տարածքի երկրաբանական կառուցվածքի ճշտման, քարտեզագրման նպատակով նախատեսվում է մոտ 46.5հա մակերեսով տարածքում կատարել երկրաբանահանութային աշխատանքներ:

Երևակման երկրաբանական քարտեզի կազմման համար անհրաժեշտ երկրաբանական երթուղիների ընդհանուր երկարությունը կկազմի մոտ 5490մ:

Հետախուզական հորատում

Օգտակար հանածոյի մարմնի եզրագծման, ուսումնասիրման և նմուշարկման նպատակով նախատեսվում է 28 հետախուզական հորատանցքերի հորատում պտուտակրչային (ջնեկային) եղանակով ЗИЛ 131 ИА УРБ 2а2 մակնիշի հորատման հաստոցով: Պտուտակրչի տրամագիծը ընդունվում է 170մմ:

Հիմք ընդունելով տարածքի երկրաբանական կառուցվածքի վերաբերյալ ֆոնդային տվյալները, նախագծվող հորատանցքերի խորությունը կազմում է 700գծ.մ, ինչը ըստ ապարների հորատելիության կատեգորիաների բաշխվում է հետևյալ կերպ.

- II կատեգորիա – բույսերի սերտաճած արմատներով հողաբուսական շերտ – 9.8գծ.մ,
- II կատեգորիա – կավային գրունտանման զանգված – 60.2գծ.մ.,
- IV կատեգորիա – ավազներ, խճաքարեր, գլաքարեր – 630գծ.մ:

Հորատման հարթակների շինարարություն

Մինչ հորատման աշխատանքները սկսելը նախապատրաստվելու է հորատման հրապարակները 35մ² չափսերի, որի ժամանակ 0.35մ հզորությամբ հողաբուսական շերտը հեռացվելու է և կուտակվելու է ծրագրավորվող հորատման վայրի մոտակայքում:

Հորատման 28 հարթակների կառուցման ժամանակ ենթակա է հանման և կուտակման մոտ 343մ³ հողային զանգված, ինչը հորատման աշխատանքների ավարտից հետո հետ է փոխվելու հորատման հարթակի տարածքում, կատարվելու է ռեկուլտիվացիա:

Հորատման հաստոցի տեղակայում/տեղահանում

Կատարվելու է հորատման հաստոցի 28 տեղակայում/տեղահանում:

Հետախուզական փորվածքների փաստագրում

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա է բոլոր հորատանցքերից ստացված հորատհանուկը: Փաստագրման աշխատանքները կատարվելու են I կարգի երկրաբանի կողմից: Փաստագրումը կատարվելու է 1:100 մասշտաբով: Այդ աշխատանքների ծավալը նախատեսվում է 700գծ.մ:

Ծավալային զանգվածի որոշում դաշտային պայմաններում

Նախատեսվում դաշտային պայմաններում 2 կետում որոշել բնամասում ավազակոպճային կուտակի բնական խտությունը, ծավալալիքքային զանգվածը, ինչպես նաև հումքի փխրեցման գործակիցը, ինչի նպատակով օգտագործվելու է հորատհանուկից առանձնացված ավազակոպճային զանգվածը:

Նմուշարկում

Տեղամասի ավազակոպճային կուտակը նախատեսվում է ուսումնասիրել որպես հումք շինարարական ավազի և խճի արտադրության համար:

Օգտակար հանածոյի որակական հատկանիշները պարզաբանելու համար նախատեսվում է վերցնել նմուշներ հորատհանուկից, օգտակար կուտակի լրիվ հզորությամբ:

Նմուշարկումն իրականացվում է ըստ շերտերի, իսկ շերտի մեծ հզորության, ոչ հստակ դրսևորված շերտավորության կամ փոքր հզորության շերտերի հաճախակի հերթագայման դեպքում՝ 2-3 մ երկարությամբ հատվածամասերով (սեկցիաներով):

Ոչ համասեռ կառուցվածքի դեպքում՝ նմուշները վերցվում են շերտերից, որոնք կարող են մշակվել առանձին: Ավազի և ավազակոպճային հումքի նմուշները հորատանցքերում վերցվում են յուրաքանչյուր շերտից կամ հատվածամասից: Կոպիճ չպարունակող ավազների նմուշները կրճատվում են մինչև պահանջվող զանգվածը՝ քառորդացման միջոցով: Ավազակոպճային նստվածքների նմուշարկման ժամանակ

նմուշի կոպճային մասը առանձնացվում և ցրվում է ըստ չափամասերի, իսկ ավազային մասը՝ քառորդացման միջոցով կրճատվում է մինչև պահանջվող զանգվածը:

Նախատեսվում է վերցնել 126 նմուշ ֆիզիկամեխանիկական փորձարկումների համար (նախնական պատկերացումներով՝ ամեն հորատանցքից 4-5-ական նմուշ, ինչը կարող է փոփոխվել կախված հաստվածքի ներքին կառուցվածքի անհամասեռությունից): Նախատեսվում է նաև 7 վերահսկողական նմուշների վերցնում:

Հումքի քիմիական կազմը ուսումնասիրվելու է 3 նմուշների վերլուծության հիման վրա:

Նախատեսվում է հումքի միներալաբանական հետազոտություններ, ինչի արդյունքում որոշվելու է օգտակար հանախոյի միներալային կազմը ամբողջությամբ և ըստ չափամասերի ու տրվելու է առանձին միներալների բաշխվածության քանակական գնահատականը: Նախատեսվում է վերցնել 3 նմուշ միներալոգո-պետրոգրաֆիական ուսումնասիրությունների համար:

Նախատեսվում են նաև ռադիոմետրիական ուսումնասիրություններ՝ օգտակար հանածոյի ռադիացիոն-հիգիենիկ հատկությունների ուսումնասիրման նպատակով:

Տոպո-մարկշեյդերական աշխատանքներ

Բոլոր հետախուզական փորվածքները և երկրաբանական սահմանները տեղադրվելու/նշվելու են գործիքային կապակցմամբ: Կապակցումը կատարվելու է CHCNAV i83 Pro ռովեր հանութային գործիքով, DJI mavic 3e դրոն RTK մոդուլի կիրառմամբ:

Ինժեներա-երկրաբանական, հիդրոերկրաբանական

և ռադիոմետրիական ուսումնասիրություններ

Երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում նախատեսվում է կատարել տարածքի հեռանկարային շահագործման ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների ուսումնասիրություններ, ավազակոպճային կուտակի ռադիոմետրիական հատկությունների պարզաբանում, որը կիրականացվի հետախուզական փորվածքների անցման ընթացքում կատարվելիք դիտարկումներով:

Հետազոտությունների նպատակն է պարզաբանել տեղամասի ընդերքում ջրատար հորիզոնների առկայությունը, լեռնային փորվածքների ջրակալման աստիճանը, ավազի և կոպճի, պարփակող ու ծածկող ապարների ֆիզիկամեխանիկական հատկությունները, որոնք բնութագրում են դրանց ամրությունը բնական և ջրահագեցած վիճակում, ապարների քարաբանական և միներալային կազմը, դրանց շերտավորությունը և այլ առանձնահատկություններ, ինչպես նաև սողանքների, սելավների, ձնահյուսերի և այլ

Ֆիզիկատերկրաբանական երևույթների առաջացման հնարավորությունը: Աշխատանքները կատարվելու են հորատանցքերում դիտարկումների, չափումների, նմուշառման, լաբորատոր փորձարկման եղանակներով:

Հաշվետվության կազմման աշխատանոցային աշխատանքներ

Միփանիկի ավագակոպճային խառնուրդի երևակման Բյու տեղամասուն երկրաբանահետախուզական աշխատանքների և օգտակար հանածոյի լաբորատոր ուսումնասիրությունների ավարտից հետո կկատարվեն աշխատանոցային աշխատանքներ, որի ընթացքում.

- կամփոփվեն և կհամակարգվեն դաշտային փաստացի երկրաբանական նյութերը, լաբորատոր ուսումնասիրությունների արդյունքները,
- կտրվի տեղամասի երկրաբանատնտեսագիտական գնահատականը,
- կկատարվի օգտակար հանածոյի պաշարների հաշվարկը,
- կկազմվի երկրաբանական հաշվետվություն՝ տեղամասի երկրաբանատնտեսական գնահատմամբ և պաշարների հաշվարկմամբ:

Կազմված հաշվետվությունը կներկայացվի ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համապատասխան մասնագիտական ստորաբաժանման դիտարկմանը:

Բեռների և ուղևորների փոխադրում

Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բեռների փոխադրումը կկատարվի գոյություն ունեցող ասֆալտապատ և հողածածկ միջհամայնքային ճանապարհներով: Նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվում: Աշխատանքները սպասարկելու է բեռնատար մեքենայով: Տրանսպորտային ծախսերն ընդունվում են դաշտային աշխատանքների նախահաշվային արժեքի 10%-ի չափով: Անձնակազմի տեղափոխումը կատարվելու է ընկերության մարդատար մեքենայով:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների (ներառյալ՝ հողերի ռեկուլտիվացիան և շրջակա միջավայրի մշտադիտարկումը) նախահաշվային արժեքը կազմում է 16509.8 հազ.դրամ:

Աշխատանքների նախանշված ժամկետներն են. աշխատանքների սկիզբը - III եռամսյակ 2025թ., աշխատանքների ավարտը - IV եռամսյակ 2027թ.: Աշխատանքների ժամանակացույցը ներկայացված է ստորև.

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԻՓԱՆԻԿԻ ԱԿԻՆ ԵՐԵՎԱՆԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2025-2028ԹԹ. ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Հափի սխավորը	Ծավալը	2025				2026				2027			
				III	IV	I	II	III	IV	I	II	III	IV		
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14		
1.	Երկրաբանահանութային աշխատանքներ	հա	46.5	46.5											
2.	Երկրաբանական երթուղիներ	մ	5490	5490											
3.	Հորատման հարթակների շինարարություն	հատ	28	14		14									
4.	Հետախուզական հորատում	գծ.մ	700	350		350									
5.	Ծավալային զանգվածի որոշում դաշտային պայմաններում	նմուշ	2	1		1									
6.	Նմուշարկում Ֆիզիկամեխանիկական փորձարկումների համար	նմուշ	26	13		13									
7.	Նմուշարկում քիմիական անալիզների համար	նմուշ	3	2		2									
8.	Նմուշարկում միներալաբանական հետազոտությունների համար	նմուշ	3	1		2									
9.	Լաբորատոր փորձարկումներ	նմուշ	32	16		16									
10.	Հորատանցքերի մարկշերտական կապակցում	հատ	28	14		14									
11.	Հորատման հարթակների ռեկուլտիվացիոն աշխատանքներ	մ ³	343.0	171.5		171.5									
12.	Ինժեներա-երկրաբանական, հիդրոերկրա. և ռադիոմետր. Ուսում.														
13.	Հաշվետվության կազմման աշխատանքային աշխատանքներ														
14.	Հաշվետվության ներկայացում ՀՀ ՏԿԵՆ նախարարություն										2027 թվականի ապրիլի 1				

4.3. Երկրաձևաբանություն, լանջերի թեքություն

Երկրաձևաբանական տեսակետից Սիփանիկի ԱԿԽ երևակման Բլու տեղամասի տարածքն իրենից ներկայացնում է Արարատյան դաշտի հարավ-արևելյան մասը կազմող հարթավայր: Շրջանի բարձրությունը տատանվում է 820-1000մ-ի, բուն երևակման տարածքում՝ 827.7-828.9մ սահմաններում: Արարատյան դաշտը Արարատյան գոգավորության հատակն է՝ լցված լճագետային, հեղեղաբերուկ նստվածքներով և լավաներով:

Արարատյան դաշտը միջլեռնային գոգավորություն է, եզրավորված հարավից՝ Փոքր ու Մեծ Արարատ լեռնազագաթներով և դեպի արևմուտք ձգվող Հայկական պար լեռնաշղթայով, հյուսիսից՝ Արագածի, Արա լեռան զանգվածներով և Ծաղկունյաց լեռնաշղթայով, արևելքից՝ Գեղամա, Երանոսի, Շեկասարի և Ուրցի լեռնաշղթաներով, արևմուտքում գոգավորությունը հարում է Կարսի սարահարթին:


Ձգվում է հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք՝ Ախուրյանի գետաբերանից մինչև Գայլի դրունք, որով բաժանվում է Շարուրի դաշտից: Դաշտի երկարությունը կազմում է ավելի քան 100 կմ, իսկ լայնությունը մինչև 25 կմ:

Արարատյան գոգավորությունը նեոգեն, չորրորդականի գոգաձալքային-գրաբենային բարդ կառուցվածք՝ տրոհված բազմաթիվ երիտասարդ խզումներով: Գոգավորության հիմքի բեկորային կառուցվածքները ուշ պլիոցենում ենթարկվել են գետերի էոզիոն մասնատման, որոնք վաղ չորրորդականում լցվել են 100-300մ հզորությամբ լավահոսքերով: Հզոր լավահոսքերը Արարատի և Նախիջևանի գոգավորություններն իրարից անջատող հորստաբեկորային միջնորմի հատվածում արգելափակել է Արաքսի հին հունը, առաջացրել է լիճ, որի հետևանքով գոյացել են Արարատյան դաշտի նստվածները: Արարատյան դաշտի եզրագոտին ներկայացված է սահմանակակից գետերի արտաբերման և ջրաբերուկային հովհարաձև կոներով, որոնք վերածվել են սեղանաձև դարավանդների:

Տարածքում տեղ-տեղ բարձրանում են ծալքաբեկորավոր հիմքի էլուստներ (Խոր Վիրապ, Սարիպապ, Սալիովիտ) կամ խարամային կոներ (Դավթի բլուր, Մեծամոր):

Բուն հայցվող տեղամասը գտնվում է մինչև 4° լանջերի թեքությամբ հարթավայրային հատվածում: Շրջանի մակերևույթի երկրաձևաբանական և թեքության անկյունների սխեմատիկ քարտեզը բերվում են ստորև նկարներ 6-7-ում:

ՇՐՋԱՆԻ ԵԿՐԱԶԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԻ
ՍԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ




ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

1 - Ցածր /700-1100մ/ ենթահորիզոնական մասամբ
դարավանդավորված ներլեռնային հարթավայրեր

Նկար 6.

ՇՐՋԱՆԻ ԼԱՆՋԵՐԻ ԹԵՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՍԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

1 - Հարթավայրեր՝ լանջերի 0-4 աստիճան թեքությամբ

Նկար 7.

4.4. Սեյսմիկ կառուցվածք, արտածին երկրաբանական երևույթներ,

Տարածքում արտածին երկրաբանական երևույթների վերաբերյալ տեղեկատվության հիմք է հանդիսանում Հայաստանում սողանքների տեխնիկական տեղեկագիրը (Միջազգային համագործակցության ճապոնական գործակալություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն, 2005): Միփանիկի ԱԿԽ երևակման Բյու տեղամասի տարածքում սողանքային մարմիններ չեն արձանագրվել (նկար 8): Համաձայն ՃՄՀԳ «Հայաստանում սողանքների տեխնիկական տեղեկագրի» տեղամասին ամենամոտ սողանքային մարմինը (Arar-138-0005) գտնում են ավելի քան 13կմ հեռավորության վրա՝ Խարբերդ բնակավայրի հարակից տարածքում:


Հայցվող տարածքի սեյսմիկ պայմանների բնութագրումը կատարվել է ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N102-Ն հրամանի: Համաձայն դրա՝ տեղամասը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, որտեղ գրունտի սպասվելիք արագացումների մեծությունը (արտահայտված ազատ անկման g արագացման մասերով) կազմում է 0.3g (նկար 9) [1]:

4.5. Կլիմայական պայմաններ

Բյու տեղամասի տարածքը գտնվում է տաք կլիմայական շրջանում (նկար 10): Ամառը շոգ է, չոր, միջին ջերմաստիճանը հուլիսին 21°C, հարաբերական խոնավությունը (ժ 15 ին) 35% ցածր, բարենպաստ լեռնահովտային քամիներ, միջին արագությունը 2.0-3.0 մ/վ: Ձմեռը ցուրտ է, անհողմ, միջին ջերմաստիճանը հունվարին 0-5°C, հարաբերական խոնավությունը (ժ 15 ին) 60-70%, քամու միջին արագությունը 2.0-3.0 մ/վ: Շրջանի կլիմայական բնութագրերը ներկայացվում են ստորև աղյուսակներում, ըստ ըստ մոտակա Երևան «Էրեբունի» և Արտաշատ օդերևութաբանական կայանների տվյալների[2]:

Աղյուսակ 3.


Օդի ջերմաստիճանը ըստ ամսիսների, °C												
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	տարեկան
Երևան «Էրեբունի»												
-3.6	-1.0	5.3	12.5	17.4	21.8	25.8	25.2	20.5	13.3	6.3	-0.2	11.9
Արտաշատ												
-3.5	-0.5	6.0	12.8	17.5	21.8	25.5	24.9	20.0	13.1	6.0	-0.4	11.9



Նկար 8.



Նկար 9.



Նկար 10.

Աղյուսակ 4.

Կայանը	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
Երևան «Էրեբունի»	-28	42
Արտաշատ	-28.9	42.6

Աղյուսակ 5.

	Օդի միջին առավելագույն (մ.ա.) և միջին նվազագույն (մ.ն.) ջերմաստիճանը, °C												տարեկան
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
Արտաշատ													
մ.ա.	1.9	5.6	13.0	19.9	24.8	29.7	33.4	33.1	28.8	21.5	13.1	5.0	19.1
մ.ն.	-7.1	-4.7	0.6	6.6	10.9	14.4	18.1	17.1	12.2	6.4	0.9	-3.9	6.0

Աղյուսակ 6.

Օդի դիտված բացարձակ առավելագույն (ա) և նվազագույն (ն) ջերմաստիճանը, °C												
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
Արտաշատ												
$\frac{19.5}{-28.9}$	$\frac{21.8}{-28.7}$	$\frac{27.9}{-27.2}$	$\frac{33.7}{-9.0}$	$\frac{35.1}{-0.6}$	$\frac{39.3}{3.3}$	$\frac{42.6}{4.5}$	$\frac{41.4}{8.0}$	$\frac{39.3}{-0.2}$	$\frac{32.1}{-5.5}$	$\frac{25.1}{-16.0}$	$\frac{22.1}{-27.3}$	

Աղյուսակ 7.

Ամիս	Օդի նշված ջերմաստիճանով օրերի միջին (մ) և առավելագույն (ա) քանակը տաք ժամանակահատվածի համար							
	Արտաշատ							
	≥25		≥30		≥35		≥40	
	մ	ա	մ	ա	մ	ա	մ	ա
Հունիս	27.0	30	15.3	30	1.9	11		
Հուլիս	30.9	31	27.4	31	10.0	26	0.1	2
Օգոստոս	30.8	31	27.0	31	8.0	26	0.2	3

Աղյուսակ 8.

Ամիս	Օդի նշված ջերմաստիճանով օրերի միջին (մ) և առավելագույն (ա) քանակը ցուրտ ժամանակահատվածի համար (նվազագույն ջերմաչափով)									
	Արտաշատ									
	≤-15		≤-20		≤-25		≤-30		≤-35	
	մ	ա	մ	ա	մ	ա	մ	ա	մ	ա
Դեկտեմբեր	1.0	14	0.2	8	0.1	4				
Հունվար	3.5	28	12	22	0.2	6				
Փետրվար	1.6	15	0.7	12	0.1	8				

Աղյուսակ 9.

Օդի էքստրեմալ ջերմաստիճանների միջին արժեքները, °C (առավելագույն միջինը ա.մ. համարիչում, նվազագույն միջինը՝ ն.մ. հայտարարում)											
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Արտաշատ											
8.8	12.6	20.7	26.6	30.7	35.0	37.8	37.2	34.2	27.8	20.0	12.3
-15.6	-13.3	-7.3	-0.6	5.4	9.5	13.1	12.8	6.7	0.3	-5.8	-11.6

Աղյուսակ 10.

Օդի խոնավությունը ըստ ամիսների, մմ											
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Երևան «Էրեբունի»											
79	75	62	56	57	49	45	46	49	62	73	79
Արտաշատ											
78	73	63	59	59	54	52	52	57	67	75	79

Աղյուսակ 11.

Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %				Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %			
միջին ամս.		միջին ամս., ժամը 15-ին		միջին ամս.		միջին ամս., ժամը 15-ին	
Երևան «Էրեբունի»							
79		67		45		28	
Արտաշատ							
78		62		52		35	

Աղյուսակ 12.

Տեղումների քանակը միջին ամսական/օրական առավելագույն, մմ												
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	տարեկան
Արտաշատ												
18	18	26	36	39	23	11	6	10	22	23	17	249
18	20	32	36	43	34	27	25	28	36	38	22	43
Երևան «Էրեբունի»												
24	23	32	35	45	23	11	8	12	29	28	21	291
24	23	34	29	42	34	29	37	51	35	36	28	51

Արտաշատ օդերևութաբանական կայանի տվյալներով, տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին կազմում են 102մմ, ապրիլ-հոկտեմբեր ամիսներին՝ 147մմ: Երևան «Էրեբունի» կայանի տվյալներով նշված ցուցաբիշները կազմում են համապատասխանաբար 128մմ և 163մմ:

Աղյուսակ 13.

Ձևաձածկույթը			
Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձևաձակույթով օրերի քանակը	Չյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ
Արտաշատ			
40	36	46	41
Երևան «Էրեբունի»			
58	47	-	60

Աղյուսակ 14.

Քամիների կրկնելիությունը

Ամիսներ	Կրկնելիությունը, % Միջին արագությունը, մ/վ							
	Ուղղությունները							
	Հս	Հս-Արլ	Արլ	Հվ-Արլ	Հվ	Հվ-Արմ	Արմ	Հս-Արմ
Արտաշատ								
հունվար	7	8	10	20	12	10	15	18
	1.7	1.7	2.7	3.1	2.4	2.0	2.2	1.7
ապրիլ	4	9	12	27	13	8	13	14
	1.7	1.8	2.1	2.8	2.5	2.5	2.8	2.6
հուլիս	8	7	9	16	9	9	18	24
	1.7	1.9	1.7	2.0	2.0	2.0	2.7	2.3
հոկտեմբեր	7	12	12	19	8	10	16	16
	1.6	1.5	2.1	2.0	1.5	2.1	2.4	2.0
Երևան «Էրեբունի»								
հունվար	4	9	11	14	21	25	12	4
	2.2	2.2	2.2	2.9	2.7	2.3	2.6	2.7
ապրիլ	7	14	8	16	20	16	13	6
	3.1	3.2	2.8	4.0	3.1	3.0	3.8	3.6
հուլիս	17	28	4	9	17	13	8	4
	5.2	5.7	2.8	2.7	2.4	2.7	2.9	4.3
հոկտեմբեր	6	18	10	10	21	20	10	5
	2.9	2.5	2.1	2.5	2.3	2.4	2.9	3.5

Քամիների միջին արագությունները

Ամիսները	Անոտորի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս-օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր-փետրվար ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
Արտաշատ						
Հունվար	88	0.3	ՀվԱրլ	2.0	ՀվԱրլ	3.1
Ապրիլ	74	0.6				
Հուլիս	80	0.4				
Հոկտեմբեր	85	0.3				
Երևան «Էրեբունի»						
Հունվար	76	0.7	Հվ	2.4	Հվ	2.7
Ապրիլ	45	1.9				
Հուլիս	36	2.8				
Հոկտեմբեր	63	1.0				

Քամու հաշվարկային արագությունը

Միջին տարեկան մթնոլորտային ճնշումը, (հՊա)	Միջին արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥ 15 մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը (մ/վ), որը հնարավոր է մեկ անգամ <n> տարիների ընթացքում		
			25	50	100
Արտաշատ					
920.3	0.7	7	23	25	27
Երևան «Էրեբունի»					
912.1	1.5	29	22	27	29

Ուժեղ քամիներով օրերի քանակը

Ամսական միջին արժեքը, օր												
Արտաշատ												
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	տարեկան
0.3	0.4	0.9	0.9	1.2	1.0	0.5	0.5	0.2	0.3	0.2	0.4	7

4.6. Մթնոլորտային օդ

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից մթնոլորտն աղտոտող նյութերի պարունակությունները որոշելու համար դիտարկումներ են կատարվում Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Չարենցավան, Կապան և Քաջարան քաղաքներում: Ընդհանուր առմամբ վերը թվարկված բնակավայրերում գործում է 15 անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայան, և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետ [6]:

Շրջակա միջավայրի պետական մոնիթորինգի համակարգի շրջանակներում Մասիս քաղաքի, ազդակիր Սիփանիկ բնակավայրի տարածքում մթնոլորտային օդի մշտադիտարկումներ չեն կատարվում:

Հայցվող տարածքի օդային ավազանների աղտոտվածությունը գնահատվել է ըստ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից մշակված ժամանակավոր առաջարկությունների, ուր ներկայացված են մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշների կախվածությունը տվյալ բնակավայրի ազգաբնակչության քանակից (աղյուսակ 18):

Աղյուսակ 18.

Բնակչության քանակը (հազար մարդ)	Ֆոնային կոնցենտրացիաները (մգ/մ ³)			
	փոշի	ծծմբի երկօքսիդ (SO ₂)	ազոտի երկօքսիդ (NO ₂)	ածխածնի օքսիդ (CO)
50 -100	0.098	0.007	0.034	1.3
10-50	0.095	0.006	0.033	1.1
<10	0.071	0.006	0.023	0.8

Առաջնորդվելով աղյուսակ 18-ի տվյալներով, Բյուր տեղամասի տարածքում մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածությունն ընդունվում է՝ փոշու կոնցենտրացիա 0.071մգ/մ³, ծծմբի երկօքսիդը 0.006մգ/մ³, ածխածնի օքսիդ 0.8մգ/մ³ և ազոտի երկօքսիդը 0.023մգ/մ³:

4.7. Ջրային ռեսուրսներ

Սիփանիկի ԱԿԽ երևակման Բյուր տեղամասի շրջանի խոշոր ջրագրական միավորը Հրազդան գետն է: Մինչև Սևանա լճի մակարդակի արհեստական իջեցումը Հրազդանը սկիզբ է առել լճից Սևան քաղաքի մոտակայքում: Գետի ավազանը նրա վերին հոսանքներում սահմանափակված է հյուսիսում Փամբակի, արևմուտքում՝ Ծաղկունյաց

և արևելքում՝ Գեղամա լեռնաշղթաներով: Գետը հիմնականում հոսում է նեղ կիրճով: Երևանից ներքև նա դուրս է գալիս Արարատյան դաշտ և թափվում է Արաքս գետը Մեծամորի գետաբերանից 5 կմ ներքև: Գետի երկարությունը 141 կմ է, անկումը մոտ 1000 մ, ջրհավաք ավազանի մակերեսը առանց Սևանա լճի 2560 կմ²: Լեռնագրական, ջրաերկրաբանական և երկրաբանական պայմաններով գետի ջրհավաք ավազանը բաժանվում է միմյանցից խիստ տարբերվող երկու մասի: Աջ ափում գերակշռում են ջրակայուն շերտերը, ձախ կողմից, ընդհակառակը, ջրահավաք ավազանը կազմված է խիստ ճեղքավորված ջրաթափանց ապարներից: Այս է պատճառը, որ գետը նշանակալի վտակներ ունի միայն աջ ափից (Մարմարիկ, Դալար, Արայիգետ): Շնորհիվ այն բանի, որ Հրազդան գետը սկիզբ է առնում Սևանա լճից, ունի մեծ անկում, հոսում է Արարատյան գոգահովտով, հանրապետության կենտրոնական շրջաններով և մայրաքաղաքի միջով, այն իրավամբ համարվում է Հայաստանի հիմնական ջրային երակը: Գետը լիարժեք կերպով օգտագործվում է Սևան-Հրազդան ջրատնտեսական համալիրում ոռոգման և էներգետիկ նպատակներով:

Հայցվող տեղամասի շրջանում Հրազդան գետի մոնիթորինգ իրականացվում է Դարբնիկ գյուղի մոտ գտնվող №55 դիտակետում (կոորդինատները՝ 40.10388, 44.38051): Համաձայն «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ 2024 թվականի 3-րդ եռամսյակի դիտարկումների Երևանից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, Հրազդան գետի գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում՝ գետի ջրերի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), 2024 թվականի հոկտեմբերին՝ գնահատվել է «վատ» (5-րդ դաս) [3, 6]:


Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող Սիփանիկի երևակման Բլյու տեղամասի տարածքի և Հրազդան գետի միջև հետավորությունը կազմում է 57-627մ:

Հայցվող տեղամասի արևմտյան և հյուսիսային սահմաններից 9.1-ից 403մ հեռավորության վրա անցնում է Արարատյան դաշտավայրի ոռոգման-դերիվացիոն համակարգի մաս հանդիսացող ջրանցք, մոտմ հեռավորության վրա գտնվում է գործող ձկնաբուխարան (նկար 5-1, 5-2):

Երևակման տարածքով անցնում է հողաշեն ոռոգման առու:

4.8. Հողային ռեսուրսներ

Ավագակոպչային խառնուրդի երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող Բյուռ տեղամասի շրջանում զարգացած են ոռոգելի խոնավ –մարգագետնային գորշ աղուտ-ալկալի կավային հողերը, մարգագետնային սողային-քլորիդային կավավազային աղուտ-ալկալի հողերը և մարգագետնաձահձային սողային-քլորիդային կավավազային աղուտ-ալկալի հողերը (նկար 11)[7]:



Նկար 11.

Մարգագետնային գորշ ոռոգելի հողերը ձևավորվել են Արարատյան հարթավայրի բնահողային շրջանում՝ Արաքս գետի և նրա ձախակողմյան վտակների բերվածքների վրա, մարդու ներգործության պայմաններում: Այն հատվածներում, որտեղ հանքայնացված խորքային ջրերը մոտ են մակերեսին, առաջացել են նաև հիդրոմորֆ աղուտ-ալկալի հողեր: Այս հողերը տարածված են Արարատյան հարթավայրի համեմատաբար ցածրադիր թույլ թեք հարթություններում: Այս տիպի հողերում հողագոյացնող պրոցեսներն ընթացել են հիդրոմորֆ ռեժիմի պայմաններում:

Մարգագետնային գորշ հողերում հումուսի քանակը կազմում է 3-3.5% : Աղուտ-ալկալի հողերը աչքի են ընկնում խիստ թույլ հումուսացվածությամբ (մինչև 1%), բարձր հիմնայնությամբ, կարբոնատների զգալի պարունակությամբ (15-18%), շերտավորված մեխանիկական կազմով:

Հողերի ստրուկտուրան փոշեհատիկա-կնձիկային է, ինչը պայմանավորված է կավային մասնիկների բարձր պարունակությամբ:



Հայցվող տարածքում հողաբուսական շերտի հզորությունը կազմում է մոտ 0.35մ:

Տեղամասի հողային ծածկույթից 2025թ. փետրվարին կատարվել է նմուշառում: Հողային նմուշի վերլուծության արդյունքները ներկայացվում են ստորև (փորձարկման հաշվետվություն N° 055_2025, նմուշի նույնականացման համարն ըստ պատվիրատուի՝ Բյու տեղամաս, նմուշի նույնականացման համարն ըստ ՓԼ-ի՝ ՊՀ33):


Տեղամասի տարածքում նախկինում խախտված, վերականգնված տարածքներ չկա, հանված/պահեստավորված հողաբուսական շերտ չկա:

Հողային նմուշի փորձարկման արդյունքները

h.h.	Փորձարկված ցուցանիշի անվանումը	Փորձարկման մեթոդը	Չափման միավորը	Փորձարկման արդյունքը
1.	Ալյումին	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	50277
2.	Սիլիցիում	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	130278
3.	Ֆոսֆոր	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	<50
4.	Ծծումբ	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	1120
5.	Քլոր	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	1450
6.	Կալիում	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	10840
7.	Կալցիում	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	43291
8.	Տիտան	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	3545
9.	Վանադիում	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	<25
10.	Քրոմ	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	218
11.	Մանգան	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	1022
12.	Երկաթ	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	46312
13.	Նիկել	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	176
14.	Պղինձ	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	59
15.	Ցինկ	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	86
16.	Արսեն	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	17
17.	Սելեն	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	<5
18.	Ռուբիդիում	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	48
19.	Ստրոնցիում	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	244
20.	Իտրիում	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	20
21.	Ցիրկոնիում	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	109
22.	Նիոբիում	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	6
23.	Մոլիբդեն	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	<5
24.	Արծաթ	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	<5
25.	Կադմիում	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	<5
26.	Անագ	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	<5
27.	Ծարիր	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	<5
28.	Վոլֆրամ	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	<5
29.	Մնդիկ	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	<5
30.	Կապար	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	12
31.	Բիսմութ	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	8
32.	Թորիում	ԻՍՕ 13196:2013	մգ/կգ	<5
33.	pH	ՀՍ ԻՍՕ 10390-2012	-	8.96
34.	Էլեկտրական հաղորդականություն	ԻՍՕ 11265:1994	մկՍ/սմ	324
35.	Խոնավություն	ԻՍՕ 11461:2001	%	8.2

4.9. Կենսաբազմազանություն

Բյուր տեղամասի շրջանի բուսականությունը ներկայացված են աղասեր անապատային բուսատեսակներով (նկար 12): Տեղամասի տարածքը երկար տարիներ օգտագործվել է որպես արոտավայր:



Նկար 12.

Տեղամասի շրջանի բուսահամակեցություններում դիտվել են *Lepidium ruderal*, *Juncus acutus*, *Holoschoenus romanus*, *Holoschoenus vulgaris*, *Puccinellia gigantea*, *Taraxacum bessarabicum*, *Salsola soda*, *Garex diluta*, *Poa bulbosa* L., *Crypsis aculeata*, *Eremopyrum triticeum*, *Bidens tripartita*, *Cirsium elodes*, *Cynodon dactylon*, *Hordeum maritimum*, *Lactuca saligna*, *Rumex crispus*, *Mentha longifolia*, *Phragmites australis* (Հրազդան գետի հունին հարակից տարածքներում) [10, 11, 12, 13, 14, 15]:

Տեղամասի ընդհանուր տեսքը ներկայացված է ստորև՝ լուսանկարներում (2025 թվականի փետրվարի դրությամբ, երբ իրականացվել է հողերի նմուշառում):



Տեղամասի տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքերում գրանցված տեսակները հայտնաբերելու նպատակով ուսումնասիրվել են ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն [16] և N72-Ն [15] որոշումները, ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտում պահպանվող հերբարիումները, հավաքածուները, ինչպես նաև ՀԱՀ Յակոբեան բնապահպանական կենտրոնի մասնագետների կողմից մշակված Կարմիր գրքի տեսակների օնլայն ատլասը:

Ըստ ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշման, Բլյու տեղամասի շրջանում հայտնի են ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված հետևյալ բուսատեսակները. - նեղախոտ նեղախոտանման (*Sagittaria sagittifolia* L.) – կրիտիկական վիճակում գտնվող տեսակ, հայտնի է Սայաթ-Նովա և Միս գյուղերի շրջակայքում: Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 800-1500 մ բարձրությունների վրա. ճահիճներում, ծանծաղ լճերի, ջրավազանների ափերին, բրնձի դաշտերում: Պահպանության գործողություններ չեն իրականացվում:

- մատուտակ խոզանավոր (*Glycyrrhiza echinata* L.) – խոցելի տեսակ, հայտնի է Միս գյուղի շրջակայքից: Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 800-900 մ բարձրությունների վրա. գետերի և առուների ափերին: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-օգոստոսին: Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում:

- հիրիկ մուսուլմանական (*Iris musulmanica* Fomin)- վտանգված տեսակ, հայտնի է Միսյանի, Մասիսի շրջանի, Այգավանի, Մասիսի, Արարատի, Սուրենավանի

շրջակայքից: Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 700-1500 մ բարձրությունների վրա. աղիավուն ճահիճներում, խոնավ աղակալած մարգագետիններում, ոռոգիչ ջրանցքների ափերին: Ծաղկում է մայիս-հուլիս Կառավարության 2008 թ. որոշմամբ հաստատված «Աղակալած ճահճուտ» բնության հուշարձանի տարածքում:

Տեղամասի նախնական դիտարկման և չափագրման Ժամանակ (2024 թվականի ապրիլ և հուլիս) տարածքի բուսածածկը դիտարկվել է իրարից 20մ հեռավորությամբ երթուղիներով: Նեղախոտ նեղախոտանման, հիրիկ մուսուլմանական և մատուտակ խոզանավոր տեսակների աճելավայրեր տեղամասում չեն արձանագրվել:

Տեղամասի շրջանում կենդանական աշխարհը ներկայացված է կիսաանապատային, մասամբ տափաստանային, հանրապետության տարածքում լայն տարածում ունեցող կենդանական ձևերով: Երկկենցաղներից և սողուններից այստեղ հանդիպում են դոդոշների, գորտերի, մողեսների և օձերի բազմաթիվ տեսակներ:

Կենսագործունեության հետքերի վերլուծությունից հետևում է, որ տեղամասի և հարակից տարածքներում կաթնասուններից հանդիպում է աղվես (*Vulpes vulpes*): Տեղամասում առկա են կրծողների, ամենայն հավանականությամբ դաշտամկների (*Microtus arvalis*) բազմաթիվ բներ:

Թռչուններից դիտարկվել են մոխրագույն ագռավ, տնային ճնճղուկ, սովորական կաչաղակ, արագիլներ: Արագիլները բազմաթիվ են, բները դիտարկվել են հարակից բնակավայրերում, ինչպես նաև տեղամասի արևմտյան հատվածով անցնող S-2-9 ճանապարհի երկայնքով՝ էլեկտրահաղորդման գծերի սյուների վրա:



Ջրածածկ տարածքներում ճպուռներից նշվել են *Lestes Barbara* և *Ischnura elegans*, թերթիկաբեղավորներից՝ *Platytomus variolosus Kolenati*, *Onthophagus amyntas (Olivier)* և *Scarabeus pius Illiger*, կարծրաթևներից՝ *Omophlus flavipennis Kuster*, *Mylabris fusca Olivier*, *Exochomus melanocephalus (Zubkov)*: Բազմաթիվ են փոքրտանիները:

Սողուններից դիտարկվել է *Ophisops elegans Menetr.*, *Eremias strauchi Kessler.*:

Բլյու տեղամասի շրջանում ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներից հայտնի են՝

- ակրամովսկու շադինիա (*Shadinia akramovskii*) – սահմափակ արեալով և կտրտված ապրելավայրով հազվագյուտ տեսակ է, գնահատված է որպես «կրիտիկական վիճակում գտնվող»: Հայտնի է Արևաբույր և Ջրահովիտ գյուղերի շրջակայքից;

- Վան բրինկի նետիկ (*Coenagrion vanbrinkae Lohmann*) – հազվագյուտ տեսակ, գնահատվել է որպես «խոցելի»: Հայտնի է Մասիս քաղաքի շրջակայքից;

- հսկա գիշաճանձ (*Satanas gigas Eversmann*) – սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ, հայտնի է Մասիս քաղաքի շրջակայքից;

- մեծաչք ճպուռ (*Lestes macrostigma (Eversmann, 1836)*) - սահմանափակ կտրատված արելառով հազվագյուտ տեսակ, հայտնի է Սիս գյուղի շրջակայքից;

- փոքր ճագարամուկ (*Allactaga elater Lichtenstein*) – Արարատյան հարթավայրի նեղ արեալային էնդեմիկ տեսակ է, խիստ մասնատված արեալով, հանդիպում է Արարատի մարզի 800-1200մ ծ.մ. բարձրություններում;

- մարգագետնային ծիծեռակոցար (*Glareola pratincola (Linnaeus, 1766)*)- հազվագյուտ տեսակ, բնադրման տեղային բնույթով: Չուի շրջանում հանդիպում է Շիրակի, Արմավիրի, Արարատի և Գեղարքունիքի մարզերում: Բնադրավայրեր հայտնաբերվել են Արմավիրի (գ. Տարոնիկ), Արարատի (Արմաշի ձկնաբուծական տնտեսություն) և Գեղարքունիքի (Սևանա լիճ) մարզերում: Պահպանության հատուկ միջոցառումներ չեն կիրառվում:

Տեղամասի նախնական դիտարկման և չափագրման ժամանակ (2024 թվականի ապրիլ և հուլիս) կատարվել է տարածքի կենդանական աշխարհի ուսումնասիրություն: Ակրամովսկու շադինիա, Վան բրինկի նետիկ, հսկա գիշաճանձ, մարգագետնային ծիծեռակոցար, մեծաչք ճպուռ և փոքր ճագարամուկ տեսակները տեղամասում չեն արձանագրվել:

4.10. Անտառային ռեսուրսներ

Նախատեսվող գործունեության տարածքում անտառներ չկան: Առհասարակ ազդակիր Միփանիկ բնակավայրում անտառային հողեր հաշվառված չեն (ըստ բնակավայրի կադաստրային քարտեզի տվյալների): Տարածքը անտառապատ/ձառապատ չէ, այն ներկայացված համեմատաբար երիտասարդ, ստորին չորրորդական դարաշրջանից ՀՀ տարածքում իհայտ եկած աղասեր անապատային բուսատեսակներով:

4.11. Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Միփանիկի երևակման տարածքը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքների սահմաններում: Բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան նաև հայցվող երևակման հարակից տարածքներում:

Արարատի մարզում, երևակման տարածքից ավելի քան 20կմ հեռավորության վրա, գտնվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցը, որը հիմնադրվել է 1958 թվականին:

Տեղամասերից մոտ 34կմ հեռավորության վրա է գտնվում մեկ այլ բնության հատուկ պահպանվող տարածք՝ «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրը, որտեղ բուսականության հիմնական տիպը ավազային ջուզգունային անապատն է: Սա միակ տեղամասն է Փոքր Կովկասում որտեղ ներկայացված են ջուզգունի համակեցությունները, և խիստ հազվագյուտ է ողջ Կովկասի համար:

Տեղամասերից մոտ 25կմ հեռավորության վրա գտնվում է «Խոր վիրապ» պետական արգելավայրը, որը հիմնվել է 2007 թվականի հունվարի 25-ի N975-Ն որոշմամբ Փոքր Վեդու գյուղական համայնքի վարչական սահմաններում, Արաքս գետի ձախակողմյան մասի Խոր Վիրապ եկեղեցական համալիրի և Հայաստանի հնագույն մայրաքաղաք Արտաշատի աջակողմյան հատվածում գտնվող՝ 50,28 հեկտար տարածքում խոնավ տարածքի էկոհամակարգի, դրա բաղադրիչների, բուսական ու կենդանական տեսակների պահպանությունը, բնականոն զարգացումը, վերարտադրությունն ու կայուն օգտագործումն ապահովելու նպատակով:

Բնության հատուկ պահպանվող տարածք է համարվում նաև բնության հուշարձանը: ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N967-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ տարածքի բնության հուշարձանների ցանկը, որոնք նույնպես հանդիսանում են բնության հատուկ պահպանվող տարածքներ:

ՀՀ Արարատի մարզում հաշվառված են բնության հուշարձանների ցանկը, ինչպես նաև դրանց գտնվելու վայրը ներկայացված է աղյուսակ 20-ում :

Աղյուսակ 20.

Հ/Հ	Անվանումը	Տեղադիրքը
1.	«Անձավիկ» քարանձավ	Վեդի քաղաքից մոտ 20 կմ հս-արլ, Ուխտուակունք գետի աջ ափին, Դարբանդ գետի հետ միախառնման տեղից 8 կմ հոսանքով վեր, 40 մ գետի հունից բարձր, ծ.մ-ից 2100 մ բարձրության վրա
2.	«Դաշտաքար» քարանձավ	Դաշտաքար գյուղից 0,2 կմ հվ, Անահավատքար լեռան հս լանջին, հիմքից 400մ բարձրության վրա
3.	«Մեծ հոր» համակարգ անձավային համակարգ»	Շաղափ գյուղից 3 կմ հս-արլ, ծ.մ-ից 2200 մ բարձրության վրա
4.	«Անանուն» շերտավոր նստվածքներ	Տիգրանաշեն-Պարույր Սևակ գյուղերի ճանապարհի 17-րդ կմ-ի վրա
5.	«Անանուն» անտիկլինալ ծալք	Երևան-Մեղրի խճուղու 81-րդ կմ (Տիգրանաշեն-Պարույր Սևակ հատվածի 15-րդ կմ)
6.	«Անանուն» ծալքավոր ստրուկտուրա	Երևան-Մեղրի խճուղու 81-րդ կմ (Տիգրանաշեն-Պարույր Սևակ հատվածի 15-րդ կմ)
7.	«Անանուն» ծալքագոյացման մերկացում	Ուրցաձոր գյուղից 4,5 կմ դեպի հս, Վեդի գետի աջ ափին
8.	«Հորթունի» բրածո ֆլորա	Զանգակատուն գյուղից 8 կմ հս-արլ
9.	«Զերմանիսի» բրածո ֆլորա	Ուրցաձոր գյուղից մոտ 20 կմ գետի հոսանքով վեր, նախկին Զերմանիս գյուղատեղիի մոտակայքում
10.	«Վեդի գետի ավազանի» բրածո ֆաունա	Վեդի գետի ավազան, Ուրցաձոր գյուղից 15 կմ հս-արլ
11.	«Աղակալած ճահճուտ»	քաղ. Արարատ, հանքային աղբյուրների մոտ, ծ.մ-ից մոտ 850 մ բարձրության վրա

Սիփանիկի երևակման տարածքում, հարակից բնակավայրերում բնության հուշարձաններ հաշվառված չեն: Հայցվող տարածքին ամենամոտ գտնվող բնության հուշարձանը «Դաշտաքար» քարանձավն է, հեռավորությունը կազմում է մոտ 35կմ:

4.12. Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ

ՀՀ կառավարության 2002 թվականի հունվարի 24-ի թիվ 65-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ Արարատի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը: Սիփանիկ բնակավայրում պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ հաշվառված չեն:

4.13. Ազդակիր համայնքը

Միփանիկի ԱԿԽ երևակման Բյուռ տեղամասը վարչական տեսակետից գտնվում է ՀՀ Արարատի մարզում, Մասիս խոշորացված համայնքի Միփանիկ բնակավայրի տարածքում:

Մասիս խոշորացված համայնքը գտնվում է Արարատյան դաշտի կենտրոնական մասում՝ Հրազդան գետի ստորին հոսանքի ձախ ափին: Հյուսիսից և արևելքից սահմանակից է մայրաքաղաք Երևանին, հյուսիս-արևմուտքից՝ Արմավիրի մարզի Փարաքար և Վաղարշապատ համայնքներին, հարավից և հարավ-արևելքից՝ Արարատի մարզի Արտաշատ համայնքին, արևմուտքից՝ Արմավիրի մարզի Արաքս համայնքին:

Բազմաբնակավայր համայնքը կազմավերվել է 2021 թվականի դեկտեմբերի 5-ին ՀՀ Արարատի մարզում կայացած համամասնական ընտրակարգով ՏԻՄ ընտրությունների արդյունքում և միավորում է 27 բնակավայր [18, 19]:

Մասիս համայնքի բնակչությունը 01.01.2024թ. դրությամբ կազմում է 10308 մարդ, Միփանիկ ազդակիր բնակավայրում՝ 589 մարդ: Ազգային առումով այն գրեթե միատարր է՝ հայեր 97.7%, եզդիներ 2.2%, ռուսներ 0.1%: Բնակչության ընդհանուր կազմում կանայք կազմում են 57.8%, տղամարդիկ՝ 42.2%:

Համայնքի տնային տնտեսությունները բաղկացած են 21800 ընտանիքից: Միջին հաշվով 1 տնային տնտեսությունը կազմված է 4 մարդուց:

Բնակչության կազմը ըստ տարիքային խմբերի ունի հետևյալ տեսքը.

- մինչև 18 տարեկան – 2474 մարդ (24%),
- 18-45 տարեկան – 4123 մարդ (40%),
- 45-63 տարեկան – 2267 մարդ (22%),
- 63 տարեկան և ավելի – 1444 մարդ (14%):

Մասիս համայնքում գործում են 26 նախադպրոցական, 33 հանրակրթական, 1 ավագ դպրոցներ և 1 քոլեջ:

Առողջապահական հաստատություններից գործում են 1 հիվանդանոց, 2 պոլիկլինիկա, 16 ԱԱՊԿ և 8 ԲՄԿ, որտեղ աշխատում են 117 բժշկական պերսոնալ և 308 մարդ՝ աշխատակազմում:

Համայնքի վարչական տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 16929.08հա: Հողերի բաշխումը ըստ նպատակային նշանակությունների ներկայացված է աղյուսակ

(տեղեկատվության հիմք՝ Մասիս համայնքի 2022-2026 թվականների հնգամյա զարգացման ծրագրի):

1992թ.-ից Հովտաշատ գյուղի օժանդակ տնտեսությանը կից ավանը վերանվանվել է Միփանիկ: Կանանց և տղամարդկանց հարաբերակցությունը նույնն է՝ կազմելով 50-ական տոկոս: Մինչաշխատունակ տարիքի բնակչությունը կազմում է 18%, աշխատունակ տարիքի ներկայացուցիչները՝ 75%, հետաշխատունակները՝ 7%: Գյուղն ունի 240 տնտեսություն:

Աղյուսակ 21.

Հ/Հ	Հոդատեսքը	Մակերեսը /հա/
1.	Գյուղատնտեսական նշանակության հողեր, որից	9807,97
1.1	Վարելահող	5653,87
1.2	Բազմամյան տնկարկներ	374,27
1.3	Խոտհարք	354,94
1.4	Արոտ	1228,57
1.5	Այլ հողատեսք	2196,32
2.	Բնակավայրի հողեր, որից	3825,97
2.1	Բնակելի	2874,55
2.2	Հասարակական հողեր	215,20
2.3	Խառը կառուցապատման հողեր	16,14
2.4	Ընդհանուր օգտագործման հողեր	536,0
2.5	Բնակավայրի այլ հողեր	184,08
3.	Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր	959,17
4.	Էներգետիկայի, տրանսպորտի և կապի հողեր	329,46
5.	Հատուկ պահպանվող տարածքներ	101,20
6.	Հատուկ նշանակության հողեր	327,23
7.	Անտառային հողեր	0,29
8.	Զբային	1577,81
Ընդամենը		16929,08
9.	Համայնքի սեփականություն հանդիսացող հողեր, որից	5143,89
9.1	տրված վարձակալության	2175,95

Ունի դպրոց, գրադարան, մանկապարտեզ, բուժկետ, կապի հանգույց: Համայնքի տնտեսության մասնագիտացման ճյուղը գյուղատնտեսությունն է, համախառն բերքի մեծ մասը տալիս է բուսաբուծությունը:

Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են շուրջ 607հա: Համայնքի հողերի հիմնական մասն օգտագործվում են որպես վարելահողեր՝ զբաղեցնելով մոտ 200հա: Ունի պտղատու և խաղողի այգիներ: Զբաղվում են այգեգործությամբ,

խաղողագործությամբ, դաշտավարությամբ, բանջարաբուծությամբ: Մշակում են ջերմասեր բանջարաբուստանային, հացահատիկային, կերային կուլտուրաներ: Կան խոտհարքեր և արոտավայրեր՝ համապատասխանաբար կազմելով 5հա և 28հա: Զբաղվում են կաթնամսատու անասնապահությամբ, թռչնաբուծությամբ:

Արդյունաբերություն չունի:

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքները հաշվառված են որպես համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողեր: Հայցվող 46.0հա-ից 30հա-ը (կադաստրային ծածկագիր՝ 03-085-0027-0075) վարձակալության իրավունքով 24 տարի ժամկետով տրամադրված է «Բլյու Սենդ» ՍՊ ընկերությանը (հավելված 2):

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

5.1. Ազդեցությունը մթնոլորտային օդի վրա

Տեղամասի տարածքում փոշեգոյացում կատարվելու է աշխատանքները սպասարկող տրանսպորտի տեղաշարժի և հորատման աշխատանքների ժամանակ:

Հորատման աշխատանքներից առաջացող փոշու ընդհանուր քանակը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$m_1 = Q_{\text{հոր.}} \times q \times T \times K \times 10^{-3}, \text{ տ}$$

որտեղ

$Q_{\text{հոր.}}$ – հորատող հաստոցի արտադրողականությունն է ըստ հորատվող ապարի, մ³
 q – տեսակարար փոշեառաջացումն է 1մ հորատվող միջակայքից, ԱԿԽ դեպքում կազմում է 0.6կգ/մ³,

T – հորատող հաստոցի աշխատանքի տևողությունն է, ժամ

K – հորատվող ապարի խոնավությունը հաշվի առնող գործակից, 0.5

Հորատող հաստոցի արտադրողականությունն է ըստ հորատվող ապարի որոշվում է ստորև ներկայացվող բանաձևով.

$$Q_{\text{հոր.}} = Q_{\text{տ.ա.}} \times (\pi \times d^2) / 4, \text{ մ}^3/\text{ժամ}$$

որտեղ

$Q_{\text{տ.ա.}}$ – հորատող հաստոցի տեխնիկական արտադրողականությունն է, 25մ/ժամ,

d – հորատանցքի տրամագիծը, 0.132մ:

$$Q_{\text{հոր.}} = 25 \times 0.014 = 0.34\text{մ}^3/\text{ժամ}$$

$$m_1 = 0.34 \times 0.6 \times 120 \times 0.5 \times 10^{-3} = 0.012\text{տ}$$

Այսպիսով, 525գծ.մ հորատանցքերի հորատման ժամանակ առաջանալու է 0.012տ փոշի:

Փոշու քանակը, որը առաջանալու է տեղամասի տարածքում բեռնատար մեքենայի տեղաշարժման ժամանակ որոշվում է հետևյալ բանաձևով`

$$Q_1 = \frac{C_1 \times C_2 \times C_3 \times C_5 \times N \times L \times q_1}{3600}, \text{ գ/վ}$$

որտեղ, C_1 - 0.9 գործակից է, որը հաշվի է առնում ավտոինքնաթափի թափքի միջին տարողությունը,

C_2 - 1.0 գործակից, որը հաշվի է առնում մեքենայի միջին արագությունը,

C₃- 0.4 գործակից, որը հաշվի է առնում ճանապարհի վիճակը,

C₄- 1.0 գործակից, որը հաշվի է առնում տեղափոխվող բեռի մակերեսը թափքում,

C₅- 0.01 գործակից, որը հաշվի է առնում մթնոլորտ արտանետվող փոշու մասնաբաժինը,

n - 2, երթերի թիվը

L - 2կմ, մեկ երթի հեռավորությունը,

N – 1, մեքենաների քանակը,

q₁- 1450գ, 1կմ վազանցի ժամանակ փոշու գոյացումն է,

$$Q_1 = \frac{0.9 \times 1.0 \times 0.4 \times 1.0 \times 0.01 \times 2 \times 2 \times 1450}{3600} = 0.0058 \text{գ/վ կամ } 0.183 \text{տ/տարի}$$

(հաշվի առնելով այն փաստը, որ դաշտային աշխատանքները կատարվելու են երկու եռամսյակի ընթացքում, ապա ընդհանուր առմամբ մեքենայի տեղաշարժից կառաջանա 0.0915տ փոշի):

Այսպիսով, հորատման աշխատանքներից և մեքենայի տեղաշարժից առաջանալու է մոտ 100կգ փոշի (0.0915+0.012=0.1տ)

Ավտոմեքենայի շարժիչի աշխատանքի, վառելիքի այրման արդյունքում մթնոլորտ է արտանետվելու 0.085գ/վրկ ածխածնի օքսիդ և 0.067գ/վրկ ազոտի երկօքսիդ :

Արտանետումների ցրման և չեզոքացման նպատակով ծրագրավորվում են մի շարք բնապահպանական կառավարման միջոցառումներ, որոնց նկարագիրը ներկայացված է ստորև:

5.2. Ազդեցությունը ջրային ռեսուրսների վրա

Տեղամասում մակերևութային բնական ջրային օբյեկտներ՝ գետեր, լճեր չկան: Հետևաբար, մակերևութային ջրային ռեսուրսների աղտոտում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում չի լինելու :

Փոշենստեցման նպատակով անհրաժեշտ 1.47մ³ (28 հորատման հարթակ x 35մ² x 1.5լ/մ² = 1470լ) տեխնիկական ջուրը մատակարարվելու է ավտոցիստեռնով պայմանագրային հիմունքներով՝ «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության կողմից : «Բյու Սենդ» ՍՊԸ կողմից ջրօգտագործում չի նախատեսվում:

Խմելու և կենցաղային նպատակներով անհրաժեշտ ջուրը գնվելու է հարակից Սիս, Սայաթ Նովա, Մասիս բնակավայրերի առևտրի կենտրոններից՝ շապրված տարբերակով:

Կենցաղային կեղտաջրերը կուտակվելու են անթափանց բետոնային լցարանում, որը կառուցվելու է հետախուզական աշխատանքներից առաջ: Բետոնային լցարանից աշխատանքների ավարտից հետո կենցաղային կեղտաջրերը տեղափոխվում են սահմանված կարգով «Վեոլիա ջուր» ՓԲԸ մասնագիտացված ստորաբաժանման կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Արարատյան հաթավայրի ոռոգիչ-դրենաժային համակարգի 2-3-րդ կարգի ենթակառուցվածքները պահպանված է նվազագույնը 9.1մ լայնությամբ անօտարելի գոտի ավտոտրանսպորտի տեղաշարժը կատարվելու է բացառապես գոյություն ունեցող ճանապարհներով և կամրջակներով, հետևաբար ոռոգման ենթակառուցվածքների վրա ազդեցություն չի կարող դրսևորվել:

5.3. Ազդեցությունը հողային ռեսուրսների վրա

Հայցվող տարածքում առկա է սակավ հողածածկ, որը ներկայացված է 0.35մ հզորությամբ ոռոգելի խոնավ-մարգագետնային-գորշ աղուտ-ավկալի հողերի համալիրով:

Հետախուզական հորերի անցման ժամանակ կատարվելու է այդ տիպի հողերի խախտում հորատման հարթակների 980մ² տարածքում: Ընդհանուր առմամբ խախտվելու է 343մ³ հողային զանգված, որը հեռացվում է հարթակի մակերևույթից նախքան հորատման աշխատանքների մեկնարկը: Հողային զանգվածը կուտակվում է անմիջապես հարթակի հարակից տարածքում, իսկ փաստագրման և նմուշարկման աշխատանքների ավարտից հետո ամբողջությամբ օգտագործվում է ռեկուլտիվացիոն աշխատանքների ընթացքում:

Տեղամասի տարածքում նոր ճանապարհների շինարարություն չի նախատեսվում, հողերի օտարում ճանապարհների համար չի պահանջվում:

Աշխատանքների այս փուլում տեղամասում նախատեսված չէ արտադրական հրապարակի շինարարություն, հողերի օտարում այս նպատակով նույնպես չի կատարվելու:

Մեքենաների հիմնական լիցքավորումը, սպասարկումը, յուղերի փոխարինումը կատարվելու է հարակից բնակավայրերի տարածքում գործող մասնագիտացված

կազմակերպություններում՝ համաձայն պայմանագրի և վավերագրի: Երևակման տարածքում նավթամթերքների պահեստավորում չի նախատեսվում :

5.4. Ազդեցություն կենսաբազմազանության վրա

Երկրաբանական ուսումնասիրության բացասական ազդեցությունը տարածաշրջանի բուսական և կենդանական աշխարհի վրա գրեթե զրոյական է, քանի որ հորատման հարթակների տարածքում խախտվող հողային շերտը վերականգնվելու է անմիջապես նմաշարկման և փաստագրման աշխատանքներից հետո:

Երկրաբանահետախուզական աշխատանքների տեխնոլոգիական գործընթացը բացառում է ագրեսիվ նյութերի կիրառումը, չեն նախատեսվում նաև հորատապայթեցման աշխատանքներ:

Կենդանական աշխարհի վրա առավել ազդեցիկ գործոնը կապված է լինելու աղմուկի և թրթռումների հետ:

Բուսականության վրա բացասական ազդեցություն գրեթե չի դրսևորվելու: Տեղամասի տարածքում դիտարկված բուսատեսակները լայն տարածված են ՀՀ կիսաանապատային-տափաստանային լանդշատային գոտում:

ՀՀ Բույսերի և Կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակներ Բյու տեղամասում չեն դիտարկվել:

Բնության հատուկ պահպանվող տարածքների վրա ազդեցությունների դրսևորում չի նախատեսվում, քանի որ «Խոսրովի անտառ» արգելոցը գտնվում է Երևակման տարածքից մոտ 20կմ հեռավորության վրա, մոտ 34կմ հեռավարության վրա՝ «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրը և մոտ 25կմ հեռավորության՝ «Խոսր վիրապ» պետական արգելավայրը :

«Դաշտաքար» քարանձավ բնության հուշարձանը գտնվում է Բյու տեղամասից մոտ 35կմ հեռավորության վրա:

5.5. Աղմուկ և թրթռումներ

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում:

Ազդակիր բնակավայրի տարածքում աղմուկի նորմավորման հետ կապված խնդիրները կանոնակարգվում է «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-111-11.3 ՀՀ սանիտարական նորմերով:

Համաձայն գործող նորմատիվ փաստաթղթերի, արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերով տարածքներում աղմուկի (ձայնի) առավելագույն մակարդակը չպետք է գերազանցի 95դԲԱ, իսկ արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերում՝ 80դԲԱ:

Տեղամասի տարածքում աղմուկի առաջացման աղբյուրներն են հորատման, հետախուզահորերի անցումն ու աշխատանքները սպասարկող տրանսպորտի տեղաշարժը: Տեղամասում հետախուզական աշխատանքների ընթացքում առաջացող գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը՝ LAէկվ կազմում է 75դԲԱ:

Աղմուկի մակարդակը աղմուկից պաշտպանող տարածքի հաշվարկային կետում (ազդակիր Սիփանիկ բնակավայր) որոշվում է՝

$$L_{Aտար} = L_{aէկվ} - \Delta L_{ahեռ} - \Delta L_{aէկր} - \Delta L_{Aկանաչ} \text{ Բանաձևով, որտեղ՝}$$

$$L_{aէկվ} - \text{աղմուկի աղբյուրի ձայնային բնութագիրը, } L_{aէկվ}=75\text{դԲԱ,}$$

$\Delta L_{Ahեռ}$ - աղմուկի մակարդակի նվազումը հաշվարկային կետի և աղմուկի աղբյուրի միջև հեռավորությունից կախված, $\Delta L_{Ahեռ}$ կազմում է 25դԲԱ,

$\Delta L_{Aէկր}$ - աղմուկի մակարդակի նվազումը էկրանով (տեղամասի ռելիեֆ), $\Delta L_{Aէկր} = 15\text{դԲԱ,}$

$$\Delta L_{Aկանաչ} - \text{աղմուկի մակարդակի նվազումը կանաչ գոտիով, } \Delta L_{Aկանաչ}=5\text{դԲԱ:}$$

Աղմուկի մակարդակը Սիփանիկ մոտ կկազմի՝

$$L_{aտար} = L_{aէկվ} - \Delta L_{ahեռ} - \Delta L_{aէկր} - \Delta L_{Aկանաչ} = 75 - 25 - 15 - 5 = 30\text{դԲԱ (նորման 45դԲԱ):}$$

Հետևաբար, ավազակոպճային խառնուրդի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ առաջացող աղմուկն ու թրթռումը հարակից բնակավայրերի տարածքում ազդեցություն բնակիչների վրա չեն ունենալու:

Բլյու տեղամասի տարածքում սանիտարական պաշտպանության գոտու սահմանում պահանջող օբյեկտներ չկան:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ առաջանալու է առաջին կարգի թրթռում (վիբրացիա), որը կապված է տեղաշարժվող բեռնատարի և հորատման հաստոցի աշխատանքի հետ:

Թրթռումների սահմանային թույլատրելի մակարդակը Z առանցքով չպետք է գերազանցի 115դԲԱ, իսկ X-Y առանցքներով՝ 112դԲԱ:

Նորմատիվային փաստաթղթերով սահմանված ցուցանիշներն ապահովելու համար են մի շարք բնապահպանական կառավարման միջոցառումներ, որոնց նկարագիրը ներկայացված է ստորև:

5.6. Ընդերքօգտագործման թափոններ

Հորատման հարթակների շինարարության ժամանակ հեռացվող հողաբուսական շերտը ընդերքօգտագործման թափոն չի հանդիսանում, քանի որ համաձայն ՀՀ հողային օրենսգրքի և ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի թիվ 1396-Ն որոշման.

- հողերի բերրի շերտը օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով,

- հողերի պահպանության նպատակով՝ հողերի խախտման հետ կապված աշխատանքներ կատարելիս հողի բերրի շերտի հանվում և պահպանվում է,

- բերրի շերտը հանելու, պահեստավորելու և պահպանելու ընթացքում ձեռնարկվում են միջոցներ, որոնք բացառում են դրա որակական հատկանիշների վատթարացումը:

Ընդերքօգտագործման թափոն չի հանդիսանում նաև հորատման ժամանակ հորատող հաստոցի սյունակային խողովակներով դեպի մակերես հանվող ավազակոպձային զանգվածը, դա օգտակար հանածո է, այն նմուշարկվում է, լցվում պարկերի մեջ և ուղարկվում է լաբորատոր փորձարկումների:

Ընդերքօգտագործման թափոնների օբյեկտ հանքավայրի տարածքում չի նախատեսվում:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ առաջանում են մի շարք արտադրական թափոններ, այդ թվում.

- Հորատման թագիկների թափոններ, որոնք բարձր ամրությամբ օժտված պողպատե ձուլվածքից կազմված իներտ մնացորդներ են: Վերագրվում են «Չտեսակավորված անագապատ պողպատ պարունակող թափոններ (այդ թվում՝ պողպատի փոշի)» տեսակին: Ծածկագիրը՝ 3512051101004: Կազմը՝ Fe, Fe₂O₃, C, Pb: Քանակը՝ մոտ 0.1տ: Հորատման աշխատանքները կատարվելու են մասնագիտացված ընկերության կողմից, որն էլ պարտավոր է հավաքել մաշված հորատման թագիկները և տեղափոխել վերամշակման համապատասխան վայր: Ընկերությունը այս տեսակի թափոնների կառավարման աշխատանքների չի կատարելու:

- Առաջանալու է նաև 0.08տ չտեսակավորված կենցաղային աղբ, որը պատկանում է վտանգավորության 4-րդ դասին, ծածկագիր՝ 9120040001004: Կազմը՝ ապակի, փայտ, թուղթ, կտոր, սննդի մնացորդներ, պոլիմերներ: Հրդեհապայթյունավտանգ չէ, կոռոզիոն ակտիվության տեսակետից պասիվ է, ռեակցիոնունակ չէ:

Կենցաղային թափոնը կուտակվում է տեղամասի տարածքում աղբի տարողություններում, ամուր տոպրակներով, այնուհետև մասնագիտացված ընկերության կողմից պայմանագրային հիմունքներով, վճարումը կատարվելու է ըստ պայմանագրի և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան:

5.7. Պատմամշակութային միջավայր

Պատմամշակութային հուշարձաններ ավագակոպճային խառնուրդի երկրաբանական ուսումնասիրության համար հայցվող տեղամասում, ինչպես նաև ազդակիր Սիփանիկ բնակավայրում չկան, ինչը բացառում է որևիցե բացասական ազդեցությունների դրսևորում պատմամշակության ժառանգության օբյեկտների վրա:

5.8. Անտառային ռեսուրսներ

Անտառային զանգվածները հայցվող տարածքում, ազդակիր Սիփանիկ, ինչպես նաև հարակից Սիս, Սայաթ-Նովա բնակավայրերում չկան, ինչը բացառում է որևիցե բացասական ազդեցությունների դրսևորում անտառային ռեսուրսների վրա:

5.9. Սոցիալ-տնտեսական ազդեցություն

Ծրագրավորվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները իրականացվելու են Մասիս խոշորացված համայնքի Սիփանիկ բնակավայրի վարչական տարածքում:

Հայցվող տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացումը որոշակի ազդեցություն կունենա նաև ազդակիր համայնքի մարդկանց կյանքի և պայմանների վրա:

Աշխատանքների թափանցիկությունն ու համայնքների իրազեկվածությունն ապահովվելու նպատակով՝ «Բյուր Սենդ» ՍՊԸ-ի կողմից «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության» մասին ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան, իրականացվելու են հանրային լսումներ և քննարկում, որոնց ընթացքում դիտարկվելու են համայնքներին աջակցության հնարավոր միջոցառումները:

Համայնքների նպատակային աջակցության միջոցառումներ մշակելու նպատակով աշխատանքն իրականացվելու է համայնքապետարանի հետ՝ պարզելու համար առաջնային լուծում պահանջող սոցիալական խնդիրները: Երկրաբանական ուսումնասիրության ընթացքում համայնքապետարանի հետ համաձայնեցված իրականացվելու են սոցիալական աջակցության ծրագրեր: Կատարվելու է ելակետային պայմանների հավաքագրում:

Սոցիալ-տնտեսական աջակցության ծրագրերը պիտի միտված մի շարք խնդիրների լուծմանը, մասնավորապես.

- նոր աշխատատեղերի ստեղծում: Երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում բազմաթիվ օժանդակ աշխատանքների (օրինակ՝ վարորդներ, աշխատակիցներին սննդի մատակարարում և այլն) իրականացման համար հատուկ մասնագիտական կրթություն չի պահանջվում: Հետևաբար, այդ աշխատանքներին ներգրավվելու են ազդակիր համայնքների բնակիչները, ինչը կստեղծի բնակիչների զբաղվածություն և լրացուցիչ եկամուտ ընտանիքների համար: Միաժամանակ, երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ իրականացնող անձնակազմի սննդի ապահովման նպատակով գնումներ են կատարվելու հենց համայնքներում, ինչը նույնպես դրական ազդեցություն է ունենալու ապրանքաշրջանառության ծավալի, տեղական արտադրանքի սպառման շուկայի վրա:

- համայնքների տնտեսական ուղղվածության շրջանակներում՝ նոր, ընդերքօգտագործման հետ չկապակցված արտադրանքի ստեղծման շղթայի մշակում և ներդրում: Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ նախատեսվում է կատարել կենսաբազմազանության, այդ թվում բուսական ծածկույթի դիտարկում, ուսումնասիրություն՝ համապատասխան որակավորում ունեցող մասնագետների մասնակցությամբ: Առանձնահատուկ ուշադրություն է նախատեսվում դարձնել դեղաբույսերի տեսակի և տարածման արեալների վրա: Հետազոտվելու են նաև տարածքում աճող ուտելի և համեմունքային բույսերը, ստացված տեղեկատվությունը ներկայացվելու է համայնքներին՝ որպես արտադրական նոր շղթաների ձևավորման ելակետային տվյալ:

Միաժամանակ, «Բլյու Սենդ» ՍՊ ընկերությունը նախատեսում է երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում կատարել շրջակա միջավայրի վրա

ազդեցությունների ամբողջական մոնիթորինգ՝ համայնքների բնակիչների, դրանց կենսապայմանների վրա ցանկացած բացասական ազդեցությունների վերահսկման և կանխարգելման նպատակով:

5.10 Սանիտարական-պաշտպանիչ գոտի.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի փետրվարի 1-ի N 06-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 31-04.01-2024 «Արտադրական և հասարակական նշանակության շենքերի ու շինությունների սանիտարապաշտպանական գոտիներ և սանիտարական դասակարգում» ՀՀ շինարարական նորմերով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների համար սանիտարական-պաշտպանիչ գոտու սահմանում նախատեսված չէ:

**6. ՄԱՐԴՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ,
ԳՈՐԾՈՆՆԵՐԸ, ՌԻՍԿԵՐԸ**

Միփանիկի ԱԿԽ հանքավայրի Բլյու տեղամասը վարչատնտեսական առումով գտնվում է ՀՀ Արարատի մարզի Մասիս խոշորացված համայնքի Միփանիկ բնակավայրի սահմաններում:

Երևակումը գտնվում է ազդակիր Միփանիկ գյուղից 3.77կմ հեռավորության վրա: Հովտաշատ գյուղի մոտակա բնակելի տարածքները գտնվում են երևակման հայցվող սահմանից 0.89կմ, Զորակ բնակավայրի շինությունները՝ 1.8կմ, Դարբնիկ բնակավայրի շինությունները՝ 2.9կմ, Սայաթ-Նովա գյուղի բնակելի տարածքները և արտադրական-արդյունաբերական շինությունները՝ 0.96կմ, Մասիս քաղաքի արդյունաբերական գոտին՝ 1.1կմ, Միս գյուղի բնակելի տարածքները՝ 110մ հեռավորությունների վրա:

Աշխատանքների ընթացքում փոշու արտանետումները և աղմուկի, թրթռումների մակարդակը գտնվում են թույլատրելի սահմաններում, արտադրական արտահոսքեր, վտանգավոր թափոններ տեղամասի տարածքում չեն առաջանալու, հետևաբար ավազակոպճային խառնուրդի երկրաբանական ուսումնասիրության արդյունքում գյուղի բնակչության առողջության վրա ազդեցությունների դրսևորում չի նախատեսվում:

Տեղամասի տարածքում աշխատողների առողջության վրա ազդեցությունները կապված են լինելու հետևյալ գործոնների հետ.

1. Շնչառական խնդիրներ, որոնք պայմանավորված են հետախուզական աշխատանքների և ավտոտրանսպորտի տեղաշարժի ժամանակ առաջացող փոշու արտանետումներով;
2. Լսողական խնդիրներ, որոնք պայմանավորված են հորատման հաստոցի և բեռնատարերի աշխատանքի ժամանակ առաջացող ձայնային ազդեցություններով:

Աշխատակիցների առողջության համար ռիսկերը բացառելու/չեզոքացնելու նպատակով նախատեսվում է տարածքի ջրցանում/խոնավեցում, ինչի նպատակն է փոշու արտանետումների կրճատում: Միաժամանակ, տեղամասի տարածքում շաբաթական մեկ անգամ կատարվելու է մթնոլորտային օդում փոշու

կոնցենտրացիաների մոնիթորինգ, ինչը թույլ կտա հսկել իրականացվող գործունեության համապատասխանությունը նորմատիվային փաստաթղթերին:

Ձայնային ազդեցությունը անձնակազմի առողջության վրա նվազեցնելու համար աշխատակիցները կրելու են ձայնամեկուսիչ ականջակալեր: Տեղամասի տարածքում պարբերաբար կատարվելու է նաև աղմուկի մակարդակի մոնիթորինգ:

Տեղամասում տեղադրվելու է վազոն-տնակ, որտեղ կազմակերպվելու է աշխատակիցների հանգստի և սնունդ ընդունելու համար բոլոր անհրաժեշտ պայմանները:

Վազոն-տնակը կահավորվելու են անհատական պահարաններով՝ ըստ աշխատակիցների քանակի:

Կազմակերպվելու է լվացարան, որը մշտապես ապահովված է լինելու անհրաժեշտ սանիտարահիգիենիկ պարագաներով, ջրով: Կազմակերպվելու է հորային տիպի 1-աչքանի արտաքնոց:

7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Վառելիքի հիմնական լիցքավորման և քսայուղերի փոխարինման աշխատանքները կատարվելու են հարակից բնակավայրերի լիցքավորման կայաններում, որտեղ առկա են համապատասխան պայմաններ:

- Մեքենաների տեխնիկական սպասարկումը կատարվելու է հարակից բնակավայրերի համապատասխան ծառայություններ մատուցող կազմակերպություններում, որտեղ առկա են անհրաժեշտ պայմաններ:

- Նավթամթերքների, նավթամթերք պարունակող մնացորդների պահեստավորում և պահում Բյուր տեղամասի տարածքում չի կատարվելու:

- Արտանետվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում:

- Փոշենստեցման նպատակով հորատման հարթակների մակերևույթի խոնավեցում մինչև աշխատանքների սկիզբը :

- Կեղտաջրերի հավաքում հորատի պ բետոնապատ անջրթափանց զուգարանում, որը աշխատանքների ավարտից հետո դատարկում են «Վեոլիա Ջուր» ՓԲԸ հատուկ ծառայության ուժերով, իսկ արտաքնոցի հորը լցվում է քարերով:

- Կենցաղային աղբի համաքում հատուկ անթափանց տարողություններում, ամուր տոպրակներով, աղբահանության պայմանագրի կնքում տարածաշրջանում գործող օպերատորի հետ, աղբահանության վճարի հաշվարկում և վճարում:

- Օգտագործվող տեխնիկական միջոցների շարժիչների կարգավորում՝ աղմուկի նվազեցման, շրջանի կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցության բացառման նպատակով:

- Հետախուզահորերի տարածքի ռեկուլտիվացիա : Ռեկուլտիվացիայի ենթակա հորատման հարթակների ընդհանուր մակերեսը կազմում է 980մ²: Հետախուզահորերի անցման ժամանակ առաջանում է 343մ³ հողային զանգված : Հողային զանգվածը մինչև հորատման աշխատանքների մեկնարկը հեռացվում է հորատման հարթակի տարածքից, կուտակվում է հարակից տարածքում և պարարտացվում է հնեցված գոմաղբով : Նմուշարկման և փաստագրման աշխատանքների ավարտից և հորատման հաստոցի տեղահանումից հետո, հողային զանգվածը հետ է լցվում հորատման հարթակի տարածք,

փխրեցվում է, դրանց խառնվում են ցեոլիտային կազմի պարարտանյութեր (հողերի մեխանիկական կազմը թեթևացնելու նպատակով) և կատարվում է դաշտավլուկազգիների բազմամյա բուսատեսակների ստրատիֆիկացված սերմերի ցանք : Աշխատանքների արժեքը ներկայացված է աղյուսակ 22-ում :

Աղյուսակ 22.

Հ/Հ	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Չափ. միավորը	Արժեքը
1	2	3	4
1.	Հորատման հարթակների շինարարության ժամանակ հողաբուսական շերտի հեռացում (միջինը 0.35մ հզորությամբ), կույտավորում, պարարտացում գոմաղբով	հազ.դրամ	125.0
2.	Հորատման աշխատանքների ավարտից հետո տարածքի փխրեցում, պարարտացված հողաբուսական շերտի հետ փռում	հազ.դրամ	82.0
3.	Հողաբուսական շերտի հետ ցեոլիտային կազմի պարարտանյութերի խառնում	հազ.դրամ	55.0
4.	Դաշտավլուկազգիների ստրատիֆիկացված սերմերի ցանք	հազ.դրամ	74.0
5.	Աշխատավարձ	հազ.դրամ	115.0
6.	Տրանսպորտային ծախսեր	հազ.դրամ	28.0
	Ընդամենը	«----»	479.0
7.	ԱԱՀ 20%	«----»	95.8
	Ընդամենը	«----»	574.8

- Երկրաբանական քարտեզագրման, երթուղիների կատարման ժամանակ տարածքի դիտարկում թռչունների բների հայտնաբերման նպատակով : Առկայության դեպքում դրանք նախատեսվում է տեղափոխել աշխատանքների տարածքից դուրս (ձվերի բացակայության պարագայում) :

- Երթուղիների ընթացքում երկրաբանի կողմից ձեռնափայտով կամ երկրաբանական մուրճով կատարվելու են հարվածներ տեղամասի մակերևույթին, ինչը ստեղծելու է հարվածային ալիքներ և դառնալու է անհանգստության և տարածքը լքելու պատճառ սողունների համար : Այս միջոցառումը թույլ կտա բացառել մարդ-կենդանի հանդիպումից :

- Աշխատանքներին մասնակցող մասնագետների իրազեկում երևակման տարածաշրջանում հայտնի ՀՀ բույսերի և ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակների վերաբերյալ :

- ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N° 191-Ն որոշման շրջանակներում կատարվելիք կենսաբազմազանության մոնիթորինգի ժամանակ առանձնահատուկ ուշադրություն է դարձվելու տեղամասի հարակից տարածքներում նեղախոտ նեղախոտանման (Sagittaria

sagittifolia L.), հիկլիկ մուսուլմանական (Iris musulmanica Fomin) և մատուտակ խոզանավոր (Glycyrrhiza echinata L.) տեսակների աճելավայրերի հայտնաբերման, հաշվառման, նկարագրման աշխատանքներին: Ստացված տեղեկատվությունը նախատեսվում է ներկայացնել ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն՝ տարեկան ամփոփ հաշվետվության տեսքով:

- ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի № 191-Ն որոշման շրջանակներում կատարվելիք կենսաբազմազանության մոնիթորինգի ժամանակ առանձնահատուկ ուշադրություն է դարձվելու տեղամասի հարակից տարածքներում ակրամովսկու շադինիա (Shadinia akramovskii), Վան բրինկի նետիկ (Coenagrion vanbrinkae Lohmann), հսկա գիշաճանճ (Satanas gigas Eversmann), մեծաչք ճպուռ (Lestes macrostigma (Eversmann, 1836)), փոքր ճագարամուկ (Allactaga elater Lichtenstein) և մարգագետնային ծիծեռակոցար (Glareola pratincola (Linnaeus, 1766) տեսակների հայտնաբերմանը: Ստացված տեղեկատվությունը նախատեսվում է ներկայացնել ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն՝ տարեկան ամփոփ հաշվետվության տեսքով:

- ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի թիվ 781-Ն որոշմամբ սահմանված դեպքերում՝ ըստ կիրառելիության, բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության միջոցառումների իրականացում:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ներկայացնելիս ընկերության կողմից գործունեության հայտում և հետագայում՝ գնահատման հաշվետվության մեջ ներառվում և հետագայում իրականացվում են հողերում առկա օբյեկտների պահպանությանն ուղղված հետևյալ միջոցառումները՝

1) վայրի բուսատեսակների և դրանց պոպուլյացիաների վիճակի ուսումնասիրության (տեսակային կազմ, տարածվածություն, քանակ) իրականացում, որի տվյալները սահմանված կարգով տրամադրվում են բուսական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում լիազորված պետական մարմին.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ արգելված թունաքիմիկատների օգտագործման կանխարգելում:

Հողերում Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում (այսուհետ՝ կարմիր գիրք) գրանցված տվյալ բուսական տեսակի նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով նախատեսվում է՝

1) առանձնացնել օգտագործման նպատակով տրամադրված տարածքում պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ սույն կետում նշված նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով.

2) ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը.

3) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված միջոցառումների իրականացման անհնարինության դեպքում կարմիր գրքում, որպես տվյալ բույսի աճելավայր չգրանցված տարածքներից, բույսերի բնական վերարտադրության նպատակով տեղափոխում են տնտեսական գործունեության արդյունքում ոչնչացման սպառնալիքի տակ գտնվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայրեր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրում են համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը՝ գենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով:

- Ճանապարհներից դուրս տեխնիկայի տեղաշարժի բացառում :
- Աղմուկի մակարդակի պարբերական վերահսկում:
- Պատահական գտածոների ընթացակարգի կիրառում՝ հետևյալ միջոցառումների իրականացման միջոցով.

✓ համապատասխան անձնակազմի և պայմանագրով աշխատողների ուսուցում պատահական հնագիտական գտածոների ճանաչման, դրանց հետ վարվելակերպի և արձագանքի ուղղությամբ;

✓ գտածոների ուսումնասիրություն հրավիրված հնագետների կողմից, որպեսզի վերջիններս ուղղորդեն հնագիտական գտածոների ճանաչման և արձագանքման գործընթացը,

✓ արձանագրությունների կազմում պատահական գտածոներին արձագանքելու համար, ներառյալ աշխատանքի ժամանակավոր դադարեցումը գտածոների հայտնաբերման վայրում;

✓ պետական մարմինների ծանուցում,

✓ պատահական գտածոների գնահատման և պեղումների արագացված ընթացակարգերի կիրառում, ազդեցությունների սահմանափակման համար, միաժամանակ նվազեցնելով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ուշացումները:

Ծրագրավորված բնապահպանական միջոցառումները ներկայացվում են նաև աղյուսակի տեսքով.

Աղյուսակ 23.

Գործողությունը	Հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բնական բաղադրիչի վրա	Չեզոքացման միջոցառումը	Արժեքը
1	2	3	4
Հորատում, հետախուզական փորվածքների անցում, տրանսպորտի տեղաշարժ	Փոշու և ծխագազերի արտանետումներ, մթնոլորտային օդի որակի փոփոխություն	Ջրցան	Տարեկան 70.0հազ.դրամ
		Արտանետվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում	Լրացուցիչ ծախս չի նախատեսվում
		Մթնոլորտային օդի որակի պարբերական մոնիթորինգ	Տարեկան 120.0հազ.դրամ
	Հողերի խախտում հորատման հարթակների տարածքում	Խախտված տարածքների վերականգնում	574.8հազ.դրամ*
	Տեղամասի տարածքի հողերի աղտոտում նավթամթերքներով	Տեխնիկայի և ավտոտրանսպորտի լիցքավորումը, յուղերի փոխարինումը, մեքենաների տեխնիկական սպասարկումը կատարվելու է մոտակա բնակավայրերում	Այս հողվածով ծախսեր չի իրականացնելու
		Հողերի աղտոտվածության պարբերական մոնիթորինգ	Տարեկան 164.0հազ.դրամ
	Բուսածածկի խախտում հորատման հարթակների սահմաններում	Խախտված տարածքների վերականգնում	574.8հազ.դրամ*
		Կենսաբազմազանության մշտադիտարկում, տարեկան մեկ անգամ պարբերականությամբ	Տարեկան 366.0հազ.դրամ
		ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 31-ի N781-Ն որոշման պահանջների ապահովում	Տարեկան 75.0հազ.դրամ

1	2	3	4
Հետախուզական փորվածքների անցում	Կենդանիների միգրացիա լանդշաֆտի խախտման և առաջացող աղմուկի հետևանքով	Խախտված տարածքների վերականգնում	574.8հազ.դրամ*
		Աղմուկի մակարդակի չափումներ	Տարեկան 100.0հազ.դրամ
	Պատմամշակութային միջավայր	Աշխատողների ուսուցում պատահական հնագիտական գտածոների ճանաչման, դրանց հետ վարվելակերպի և արձագանքի ուղղությամբ	250.0հազ.դրամ
Անձնակազմի կենսագործունեության համար անհրաժեշտ պայմանների ստեղծում	Տեղամասի տարածքի աղբոտում կենցաղային թափոններով	Կենցաղային աղբի հավաքում հատուկ պարկերի մեջ և հետագա տեղափոխվում մոտակա աղբահավաք կետեր	Տարեկան 150.0հազ.դրամ
	Տեղամասի տարածքի աղտոտում կենցաղային արտահոսքերով	Հորատիպ բետոնապատ անջրաթափանց զուգարանի շինարարություն	Կատարվելու է նախքան հետախուզական աշխատանքների մեկնարկը, 50.0հազ.դրամ
		Հորատիպ զուգարանի դատարկում հատուկ ծառայության ուժերով	Տարեկան 80.0հազ.դրամ

* նույն գումարն է, որը վճարվում է շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի N1733-Ն որոշման դրույթներին համապատասխան

**8. ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻՆ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ
ՓԱՍՏԱԹՂԹՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ**

ՀՀ կառավարության 2023 թվականի մայիսի 11-ի N 730-Լ որոշմամբ հաստատվել է մինչև 2035 թվականը հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությունը: Մշակված և հաստատված ռազմավարության հիմնական նպատակն է ոլորտի կարգավորման ու զարգացման, ընդերքի ռացիոնալ և համալիր օգտագործման, բնապահպանական և առողջապահական ռիսկերի կառավարման ու մեղմման, եկամուտների համաչափ/արդարացի բաշխման մեխանիզմների սահմանումը, որոնք կնպաստեն Հայաստանի տնտեսության երկարաժամկետ զարգացմանը:

Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման տեսլականը հիմնված է մի շարք ուղենիշային սկզբունքների վրա, այդ թվում.

1. Հայաստանի Հանրապետության ընդերքում առկա օգտակար հանածոների պաշարները պետք է ծառայեն ներկա և ապագա սերունդներին

Վեջին տարիներին՝ կապված Արաքս գետի սակավաջրության հետ, գետային ավազաններում առկա ավազի պաշարները խիստ կրճատվել են, ինչը հանգեցրել է հումքի և դրա սպառման ոլորտներում (շինարարություն, ճանապարհաշինարարություն) աշխատանքների սակագների թանկացմանը: Հետևաբար կարևոր է, որ առկա պաշարների արդյունավետ օգտագործմանը և ստացվող օգուտների արդարացի բաշխմանը զուգընթաց իրականացվի նոր պաշարների հայտնաբերում: Սիփանիկի ԱԿԽ հանքավայրի Բյու տեղամասի տարածքում օգտակար հանածոյի պաշարների երկաբանական ուսումնասիրության աշխատանքները նախաձեռնել է «Բյու Սենդ» ՍՊ ընկերությունը, աշխատանքները իրականացվելու են ընկերության ֆինանսավորմամբ, ապահովելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր պահանջները:

2. Հանքարդյունաբերությունը պետք է նպաստի ողջ հանրության բարեկեցությանը:

Ընդերքը շահագործում են ֆինանսապես և տեխնիկապես կարող ընկերությունները, սակայն ընդերքի շահագործումից ստացված օգուտները պետք է հասանելի լինեն ողջ հասարակությանը: Նույն տրաբամաբանությամբ՝ օգտակար հանածոների արդյունահանման գործընթացը չպետք է բեռ դառնա ազդակիր համայնքների համար: «Բյու Սենդ» ՍՊ ընկերությունը ծրագրավորվող աշխատանքների ընթացքում նախատեսում է ֆինանսական աջակցություն ազդակիր համայնքի սոցիալ-

տնտեսական զարգացման ծրագրերին: Հանքարդյունահանման ընթացքում ստեղծվելիք, արդիական սարքավորումների շահագործման, հետախուզման փուլում, ինչպես նաև հետագայում՝ ապագա հանքի սպասարկման և մատակարարման հետ կապված նոր աշխատատեղերը կնպաստեն գործազրկության կրճատմանը, արտագաղթի կանխմանը:

3. Հանքարդյունաբերության ոլորտի խնդիրը ոչ միայն բացասական ազդեցությունները մեղմելն է, այլ նաև գուտ դրական ազդեցություններ ձևավորելը:

Ժամանակակից հանքարդյունաբերության ամենաբարձր ստանդարտները պահանջում են ընդհանուր հաշվեկշռում բացասական ազդեցության մեղմման ու դրական ազդեցություն թողնելու միջոցառումների ապահովում, ինչը հնարավոր է իրականացնել գործնականում: «Բյու Սենդ» ՍՊ ընկերությունը մշակել և շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությանն է ներկայացնում է բնապահպանական կառավարման համապարփակ պլան, որտեղ դիտարկվում են շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա ազդեցությունների կանխարգելման և չեզոքացման համալիր միջոցառումներ:

Ամփոփելով վերը նշվածը, կարող ենք փաստել, որ «Բյու Սենդ» ՍՊ ընկերության կողմից Սիփանիկի ԱԿԻՍ երևակման Բյու տեղամասի տարածքում ծրագրավորվող ընդերքօգտագործման աշխատանքները իրենց բնույթով համապատասխանում են ՀՀ հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության ուղենիշային սկզբունքներին:

9. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ

ԾՐԱԳԻՐԸ

Օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության ընթացքում ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ, 24 ժամ տևողությամբ ;
2. նավթամթերքներով տեղամասի տարածքի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով մշտադիտարկումներ՝ ամսեկան մեկ անգամ;
3. կենսաբազմազանության ուսումնասիրություն, նկարագրում՝ տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն (հստակ դիտարկան կետ նշել հնարավոր չէ, դիտարկումը կատարվելու է տեղամասում և հարակից տարածքներում) ;
4. ռելյուլտիվացված տարածքների հողաբուսական շերտի քիմիական կազմի և հումուսի պարունակության մշտադիտարկում՝ տարեկան մեկ անգամ ;
5. աղմուկի մակարդակի վերահսկողություն :

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման և աղտոտվածության ուսումնասիրության նպատակով վերցված նմուշների լաբորատոր հետազոտությունը նախատեսվում է իրականացնել հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում: Ստացված տեղեկատվությունը ներկայացվելու է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն՝ ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշման պահանջներին համաձայն:

Մշտադիտարկման նպատակով ընկերությունը տարեկան մասնահանելու է 750.0հազ.դրամ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության աղտոտման կանխարգելման մոնիտորինգի կետերի տեղադիրքը ներկայացված է ստորև նկար 13-ում:

Մշտադիտարկումների կառուցվածքները ներկայացվում է նաև աղյուսակ 24-ում:


Մշտադիտարկումների օբյեկտը	Ցուցանիշը	Մշտադիտարկումների տեսակը	Նվազագույն հաճախականությունը
1	2	3	4
Մթնոլորտային օդ, երևակման տարածք, տեղամասի տարածք	Փոշի, ածխածնի օքսիդ, ազոտի օքսիդներ, մուր, ծծմբային անհիդրիդ	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, չափումներ ավտոմատ չափման սարքերով	Աշխատանքների իրականացման վայր, շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ
Տեղամասի մակերևույթ, աշխատանքների իրականացման վայր	Նավթամթերքների հետքեր	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն	Տեղամասի տարածք, ամսական մեկ անգամ
Ռեկուլտիվացված հորատման հարթակների հողային շերտ	Քիմիական կազմ, հումուս	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն	Տեղամասի տարածք, տարեկան մեկ անգամ
Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ. երևակման տարածք և հարակից շրջան	Տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն	Հաշվառում, նկարագրություն, քարտեզագրում	Տեղամասի և հարակից տարածքներ, տարեկան մեկ անգամ
Աղմուկի մակարդակ, տեղամասի տարածք	Չայնային բնութագիր	Չափումներ ավտոմատ սարքերով	Տարեկան մեկ անգամ

ՄԻՓԱՆԻԿԻ ԱՎԱՋԱԿՈՂԱՅԻՆ ԽԱՌՆՈՒՐԴԻ ԲԼՅՈՒ - ՍԵՆԴ ՏԵՂԱՄԱՍԻ

Ս Խ Ե Մ Ա Տ Ի Կ Ե Ր Կ Ր Ա Բ Ա Ն Ա Կ Ա Ն Ք Ա Ր Տ Ե Զ

Կոորդինատային համակարգը՝ WGS-84 (ARMREF 02)
Բարձրության համակարգը՝ Բայթյան

Մասշտաբ 1 : 2000



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մթնոլորտային օդի մշտադիտարկման կետ
- Նավթամթերքներով հողային ծածկույթի աղտոտման մշտադիտարկման կետ
- Աղմուկի մակարդակի դիտարկման կետ
- Ռեկուլտիվացված հարթակների հողային շերտի մշտադիտարկման կետ
- Կենսաբազմազանության դիտարկման տարածք (մոտ 51.3հա)

Օտնուցում՝ Մշտադիտարկման կետերի տեղադիրքերը ներկայացված են պայմանական:
Տեղադիրքերը փոփոխվելու են ըստ մշտադիտարկման պահին աշխատանքների իրականացման վայրի:

Նկար 13.

10. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

Արտակարգ իրավիճակների պատրաստ լինելու համար՝ շարժական կապի միջոցների առկայություն հետախուզական աշխատանքներ իրականացնող անձնակազմի մոտ, առաջին բուժօգնության միջոցների առկայություն, անվտանգության կանոնների վերաբերյալ անձնակազմի գիտելիքների ստուգում:

Երևակման տարածքում արտակարգ իրավիճակները կարող են պայմանավորված լինեն հետևյալ գործոններով.

1) Երկրաշարժ՝ հաշվի առնելով, որ Հանրապետության տարածքը գտնվում է սեյսմիկ ակտիվ գոտում: Ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N102-Ն հրամանի՝ երևակման տարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, որին բնորոշ է 300սմ/վրկ² կամ 0.3g գրունտի հորիզոնական արագացման մեծություն:

Նախատեսվում է մշակել ուժեղ երկրաշարժերի դեպքում գործողությունների պլան՝ վտանգավոր տարածքներից աշխատակիցների ապահով տարահանումն իրականացնելու նպատակով: Անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ հրահանգավորում իրականացնելու ժամանակ առանձին ներկայացվելու են նաև երկրաշարժերի ժամանակ աշխատակիցների պահվածքի կանոնները, գործողությունների հաջորդականությունը: Աշխատանքները սպասարկող կենցաղային նշանակության վազոն-տնակում նախատեսվում են առաջին օգնության դեղորայքային փաթեթներ:

2) Հրդեհներ՝ կապված մարդածին գործոնների հետ: Հրդեհային անվտանգությունն ապահովելու համար աշխատակիցները տեղեկացվելու են տեխնոլոգիական պրոցեսներում օգտագործվող նյութերի հրդեհավտանգության վերաբերյալ: Նշանակվելու է հրդեհային անվտանգության համար պատասխանատու անձ, մշակվելու է հրդեհի դեպքում անձնակազմի գործողությունների պլան: Տեղամասում՝ հատուկ հատկացված վայրում տեղադրվելու են հրդեհաշիջման սկզբնական միջոցներ՝ կրակմարիչներ, ավազով արկղ, բահ:

3) Անբարենսպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագացում, անհողմություն, անոմալ բարձր շոգ կամ ցուրտ, թանձր մառախուխ, ամպրոպ):

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների իհայտ գալու դեպքում կիրառվում են հետևյալ միջոցառումները (ըստ իրավիճակի).

- ավելացվում է կատարվելիք ջրցանը,
- կրճատվում է աշխատանքի տևողությունը,
- կրճատվում է միաժամանակ աշխատող մեքենաների և մեխանիզմների քանակությունը,
- բեռնատար մեքենաները կահավորվում են հատուկ մառախուղի լույսերով,
- աշխատակիցները պատսպարվում են վազոն-տնակում:

Միփանիկի երևակման Բյու տեղամասի տարածքում սողանքային մարմիններ չկան, հետևաբար սողանքային երևույթների հետ կապված արտակարգ իրավիճակներ չեն լինելու :

11. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Ծրագրավորվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները կկատարվեն ՀՀ Աշխատանքային օրենսգրքի, ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի և «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի և այլ նորմատիվային փաստաթղթերի դրույթներին համապատասխան:

Մասնավորապես, «Բլյու Սենդ» ՍՊ ընկերության վարչակազմը պարտավորվում է ապահովել աշխատանքների տեխնիկական անվտանգության հետ կապված հետևյալ պահանջները.

- աշխատանքի են թույլատրվում համապատասխան մասնագիտական կրթություն կամ որակավորում ունեցող անձիք,

- աշխատանքներում ներգրավված ողջ անձնակազմը յուրաքանչյուր դաշտային սեզոնից առաջ անցնում է պարտադիր անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ հրահանգավորում,

- բացառվում է աշխատանքների իրականացումը այն տարածներում, որտեղ հնարավոր են սողանքային, քարաթափման, սելավային երևույթներ կամ առկա է ջրհեղեղի վտանգ,

- դաշտային պայմաններում աշխատանքներ իրականացնող անձնակազմը պետք է ունենա համապատասխան հանդերձանք, պիտույքներ, առաջին բժշկական օգնության անհատական պարագաներ, արտակարգ իրավիճակի վերաբերյալ ազդարարման գործիքակազմ,

- երկրաբանական երթուղիները իրականացվելու են առնվազն երկու աշխատակցի մասնակցությամբ,

- երկրաբանական երթուղիները կատարվելու են բացառապես օրվա լուսավոր ժամանակահատվածում,

- վտանգավոր տեխնիկական օբյեկտների (էլեկտրահաղորդման օղային գծեր, կաբելային գծեր, գազատարեր, երկաթգիծ և այլն) պահպանման գոտիներում աշխատանքների իրականացման անհրաժեշտության դեպքում դրանք համաձայնեցվում են տեխնիկական օբյեկտները շահագործող կազմակերպությունների հետ:

Երկրաբանահետախուզական աշխատանքներ իրականացնող մասնագետներին տրամադրվում են վտանգավոր գոտիների բաշխումը արտահայտող քարտեզներ,

- էլեկտրական ցանցերի ենթակառուցվածքների տարածքում մեքենաների տեղաշարժը կատարվում է բացառապես այն հատվածներով, որտեղ ճանապարհի հարթության և օդային գծերի միջև առկա անհրաժեշտ տարածություն,

- բոլոր սարքավորումները շահագործվում են տեխնիկական փաստաթղթերին համապատասխան,

- արգելվում է մեխանիզմների և սարքավորումների շահագործում տեխնիկական անձնագրերով սահմանված բեռնվածությունների (ճնշում, հոսանքի ուժ, լարում և այլն) գերազանցման դեպքում,

- կտրող սայրերով գործիքների, սարքերի տեղափոխումը պետք է իրականացվի պաշտպանիչ ծածկաշապիկներով,

- աշխատաժամանակի առավելագույն տևողությունը չի գերազանցելու օրական 10 ժամից (հանգստի և սնվելու համար՝ ընդմիջումը ներառյալ),

- աշխատանքները պետք է իրականացվեն ընդհատվող՝ 6-օրյա աշխատանքային շաբաթով,

- աշխատանքային շաբաթը ընդհատվելու է նաև տոնական ու հիշատակի հանգստյան օրերին:

Աշխատակիցները պետք է ապահովված լինեն հանգստի և սննդի ընդունման հարմարավետ տարածքով՝ աշխատանքները սպասարկվելու են բեռնարկղային տիպի ճաշարանն ու լվացարանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N102-Ն հրաման
2. Շինարարական կլիմայաբանություն, ՀՀՇՆ II-7.01-2011
3. Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին: ՀՀ Կառավարության N 75 - Ն որոշում, 27.01.2011թ
4. Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության հրապարակումներ
5. Հայաստանի ազգային ատլաս: Հատոր Ա
6. ՀՀ ՇՄՆ «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ -ի տվյալներ
7. Почвы Армянской ССР. Ред./ Р.А. Эдилян, Г.П. Петросян, Н.Н. Розов. Ереван: “Айастан”, 1976 г.
8. Հայաստանի բույսերի Կարմիր Գիրք.– 2010թ.
9. Հայաստանի կենդանիների Կարմիր Գիրք.– 2010թ.
10. Флора Армении / под ред. А.Л.Тахтаджяна. – Ереван: изд-во АН Арм ССР
11. “Растительность Армянской ССР”. Магакьян А.К.
12. “Флора, растительность и растительные ресурсы Армении”, Институт ботаники НАН РА Армянское ботаническое общество. Ереван
13. “Дикорастущие съедобные растения Армении”. А.П. Тер-Восканян, Ученые записки Ереванского государственного института.
14. “Цветущие уголки биоразнообразия”, FAO, <http://www.fao.org/3/i1687r/i1687r08.pdf>
15. “Деревья и кустарники Армении в природе и культуре”. Ж.А. Варданян, 1952
16. Животный мир Армянской ССР. Даль С.К, 1954
17. Թորամանյան Թ., Նյութեր Հայկական ճարտարապետության պատմության, հ. 2, Երևան, 1948:
18. ՀՀ Արարատի մարզպետարանի պաշտոնական կայք
19. Մասիս խոշորացված համայնքի պաշտոնական կայք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ առ 2023-12-13

«ԲԼՅՈՒ ՍԵՆԴ»
Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)

Գրանցման համար 278.110.1358398

Հիմնադրման տարի 2023

Գրանցման ամսաթիվ 2023-12-13

Գործունեության ժամկետ **Անժամկետ**

Կարգավիճակ **Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:**

Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ) 54458200

Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ) 00523436

Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովագրի ծածկագիր) 44518398

Էլ. փոստ -

Կայք -

Գտնվելու վայրը

Հասցե **ԽՈՐԵՆԱՅՈՒ Փ. / 221/36 տ. ԷՐԵՐՈՒՆԻ 0008
ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ**

Հեռախոս -

Գործադիր մարմնի ղեկավար

Պաշտոն **Տնօրեն**

Անուն Ազգանուն **ԺՈՐԱ ՄԵԼՈՅԱՆ ԱԹԱԲԵԿԻ**

Անձնագրային տվյալներ **AS0502898 2019-02-07 009**

Հասցե **ԽՈՐԵՆԱՅՈՒ Փ. / 221/36 տ. ԷՐԵՐՈՒՆԻ 0008
ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ**

Տեղեկություններ իրավահաջորդության / իրավանախորդության վերաբերյալ

Իրավանախորդ(ներ) գրաված չեն

Տեղեկությունների կանոնադրական կապիտալի չափի մասին

Կանոնադրական կապիտալի չափը << դրամով՝ 50000

Մասնակիցներ

Անուն Ազգանուն / Անվանում	Գրանցամատյանում գրառման ամսաթիվ	Բաժնեմասի չափը	Բաժնեմասի չափը << դրամով
ԺՈՐԱ ՄԵԼՈՅԱՆ ԱԹԱԲԵԿԻ Անձնագիր հ/հ AS0502898 2019-02-07 տրվ. 009 ի կողմից ՀՇՀ 2010900910 Հասցե՝ ԽՈՐԵՆԱՅՈՒ Փ. / 221/36 տ. ԷՐԵՎԱՆԻ 0008 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ	2023-12-13	100 %	50000

Պետական միասնական գրանցամատյանում կատարված փոփոխություններ

Պետական միասնական գրանցամատյանում փոփոխություններ կատարված չեն

Գրանցման ամսաթիվ	Փոփոխություններ

Քաղվածքը տրամադրող՝  Գեղանուշ Քոչարյան

Քաղվածքի տրամադրման ամսաթիվ՝ 2023-12-13





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 1 հուլիսի 2024 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ԲԼՅՈՒ ՍԵՆԴ» ՍՊԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Արարատ, համայնք Մասիս գյուղ Սիփանիկ հողամաս

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՏԱԹՂԹԵՐԸ

Անշարժ գույքի վարձակալության իրավունքի առուվաճառքի 25.06.2024թ. գ/մ 11341 պայմանագիր

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 03-085-0027-0075

Մակերեսի չափը (հա)՝ 30

Նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Այլ հողատեսք

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 01072024-03-0070, գաղտնաբառ՝ FLGIRNSUNRJD

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Վարձակալության ժամկետը՝ 24 տարի՝ սկսած՝ 18.05.2011թ.-ից:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ՀՐԱՆՏ ՇԱՀԱԶՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 01072024-03-0070, գաղտնաբառ՝ FLGIRNSUNRJD

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Էջ 2/2

